ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի 25-րդ Հոդվածի 2-րդ պարբերության համաձայն

Ներածություն

Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) 25-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է նշված կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր վեցերորդ շրջանի զեկույցը (այսուհետ՝ **Զեկույց**):

Զեկույցը ներառում է տեղեկատվություն կոնվենցիայի դրույթների կատարման ուղղությամբ 2020-2024թթ. ընկած ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի (97) 10 բանաձևի 21-րդ կետի.

Զեկույցը մշակվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ձևաչափին համապատասխան Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ***CM/RESCMN(2023)6՝*** բանաձևի կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ (բաժին 1) և Շրջանակային կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ (բաժին 2):

Զեկույցի նախապատրաստական աշխատանքները համակարգելիս ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը փոխգործակցել է ՀՀ արդարադատության նախարարությաան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Գլխավոր դատախազության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, ՀՀ հեռարձակողի խորհրդի հետ:

Զեկույցի նախագիծը շրջանառվել է ՀՀ Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի կազմում ընդգրկված ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի 25-րդ Հոդվածի 2-րդ պարբերության համաձայն

ՄԱՍ 1: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի՝ ՀՀ կողմից իրականացման վերաբերյալ ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/ResCMN(2023)6 Բանաձևի կատարմանն ուղղված միջոցառումներ

(Կետ 1). Արդյունավետորեն պաշտպանել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և նրանց ներկայացուցիչների ազատ արտահայտվելու իրավունքը՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային չափանիշների, և արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ պայքարելու արտահայտվելու ազատության վրա սահմանափակող ազդեցություն ունեցող երևույթների դեմ

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը նախատեսում է կարծիքի արտահայտման ազատության իրավունքը: Երաշխավորվում է մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում են լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները, մասնավորապես՝ արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները: Տեղեկատվության տնօրինողը, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե այն.

- պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք;
- խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը;

- պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները;
-բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք);
- խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

«Լրագրողներ առանց սահմանների» (RSF) կազմակերպությունը հրապարակված մամուլի ազատության ինդեքսը, որը գնահատում է լրագրողների աշխատանքային պայմանները աշխարհի 180 երկրներում և տարածքներում, արձանագրում է, որ Հայաստանը բարելավել է իր դիրքերը ու գտնվում է «բավականին լավ» իրավիճակ ունեցող երկրների շարքում՝ հաշվետու շրջանում անցում կատարելով 61-ից 43-րդ հորիզոնականները: Խոսքի ազատության մակարդակով Հարավային Կովկասում Հայաստանն, ինչպես և նախորդ տարիներին, առաջատարն է:

Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023թ. տարեկան հաղորդման՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքների մեծ մասը չի վերաբերել ազգային պատկանելության հիմքով իրավունքների խախտմանը կամ խտրականությանը (այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և նրանց ներկայացուցիչների ազատ արտահայտվելու իրավունքի որևէ սահմանափակումներին):

(Կետ 2) Ապահովել ազգային փոքրամասնությունների՝ մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի, լեզվի մասին տեղեկատվության ներառումը դպրոցական ծրագրերում և ուղեկցող՝ ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման ուսումնական նյութերում: Այս կապակցությամբ, Տավուշի մարզում իրականացված պիլոտային ծրագրի գնահատումը կարող է իրականացվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ համատեղ

ՀՀ կառավարությունը 2021 թվականի փետրվարի 4-ին թիվ 136-Ն որոշմամբ հաստատել է ***հանրակրթության նոր պետական չափորոշիչը***, որը սահմանում է պետության ակնկալիքը և պահանջը դպրոցից, հանրակրթական բոլոր աստիճանների սովորողներից և շրջանավարտներից: Նոր չափորոշչի հիման վրա իրականացվել են առարկայական ծրագրերի ու դասագրքերի մշակման և ներդրման աշխատանքներ: Ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվել է «Ես և շրջակա աշխարհը» և «Պատմություն» առարկայական ծրագրերում: Ծրագրերի փորձարկման

և լրամշակման ընթացքում իրականացվել են տարբեր քննարկումներ շահառուների, այդ թվում՝ ազգային փաքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Պետական նոր չափորոշիչի ներդրումն ուղեկցվել է ուսուցիչների վերապատրաստմամբ, ներառյալ ազգային փոքրամասնությունների՝ պատմության, մշակույթի, տոների, ծեսերի, կրոնի և բովանդակային այլ բաղադրիչների ուղղությամբ:

Չափորոշչի պիլոտային ներդումն իրականացվել է 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում՝ Տավուշի մարզում, իսկ ամբողջ հանրապետությունում այդ ներդրվել է 2023 թվականից՝ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների համար: Առաջիկա տարներին այն աստիճանաբար կներդրվի նաև մյուս դասարաններում:

(Կետ 3) Առաջնահերթ միջոցներ ձեռնարկել եզդի աշակերտների (հատկապես աղջիկների) հանրակրթությունից դուրս մնալու անհամաչափ բարձր ցուցանիշների դեմ պայքարելու ուղղությամբ: Իշխանությունները պետք է տվյալներ հավաքագրեն և համագործակցեն քաղաքացիական հասարակության ու փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ մշակելու և իրականացնելու հստակ ցուցիչներով ու արդյունքներով ռազմավարություն՝ դպրոցից դուրս մնալու ցուցանիշների նվազեցման նպատակով՝ հաշվի առնելով դրան նպաստող գործոնների ամբողջ շրջանակը:

2022թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքը: Ծրագրով, մասնավորապես, սահմանված է.

- ազգային փոքրամասնությունների համար որակյալ կրթության հասանելիության ապահովում, այդ թվում՝ բարձրագույն կրթության մակարդակում, ուսուցիչների պատրաստման, ուսուցիչների շարունակական վերապատրաստման և որակավորման բարձրացման, ազգային փոքրամասնությունների լեզուներով ուսուցիչների խրախուսման տարբեր եղանակների ներդրման, ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում նախադպրոցական կրթության շարունակական ընդլայնման և այլ միջոցներով (81-րդ կետի 5) ժա. ենթակետ),
- հայալեզու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագիր և էլեկտրոնային ուսումնական պաշարների հարստացում՝ նկատի ունենալով նաև սփյուռքահայ կրթօջախների կարիքները (81-րդ կետի 7 բ ենթակետ):

Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի գործարկման շրջանակներում ՀՀ Կառավարության կողմից 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն սահմանվել է ***կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման պարտադիր կարգ***: Համաձայն կարգի՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպությունը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, նախարարությանը ներկայացնում է 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ հաստատությունում, այդ թվում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում (ՆՄՄԿ-ում) հաշվառված չեն: Կարգը ենթադրում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով նշված երեխաների նույնականացում, կրթության մեջ ներառելու կամ կրթությունից դուրս մնալու ռիսկերի կառավարման համագործակցային ծրագրերի մշակում՝ ներգրավելով տարբեր նախարարությունների, համայնքների, տեղական ինքնակառավարման մարմինների ռեսուրսները: Տեղեկատվական համակարգն ամբողջությամբ ավտոմատացված է, ինչը հնարավորություն է տալիս ինչպես բացահայտել հանրակրթությունից դուրս մնացած, այնպես էլ դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաներին: 6 աշխատանքային օր անընդմեջ բացակայող երեխաները համարվում են ռիսկի տակ գտնվող, և եթե բացակայության համար չկան հիմնավոր պատճառներ, նախաձեռնում են երեխաներին դպրոց հետ բերելու ուղղությամբ աշխատանքներ:

Ուսումը արտասահմանում շարունակելու պատրվակով ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաներին ՀՀ ուսումնական հաստատություններից դուրս թողնելու դեպքերը կանխելու նպատակով 2024 թվականի ապրիլի 25-ին ՀՀ կառավարության N 597-Ն որոշմամբ փոփոխություններ են իրականացվել վերոնշյալ կարգում, որպեսզի աշակերտի տեղափոխությունը հնարավոր լինի միայն ԿԳՄՍ նախարարություն հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելուց և դրանց հիմա վրա դրական դիրքորոշում ստանալուց հետո:

Հանրակրթության պետական ներդրված նոր չափորոշչի շրջանակներում դպրոցներում մեկնարկել է ***առողջ ապրելակերպի խմբակային դասավանդման պարտադիր ծրագիր***, որն ուղղված է երեխաների ինքնազարգացմանն ու ինքնաճանաչմանը, վնասակար ազդեցություններից խուսափելու, առողջ սնվելու, առաջին օգնություն ցուցաբերելու կարողությունների զարգացմանը՝ ներառելով հակածխախոտային պայքարի, բռնության, առողջ փոխհարաբերությունների և վերարտադրողական առողջության հետ կապված թեմաներ: Ծրագիրը միտված է նպաստելու վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների վերաբերյալ երեխաների տեղեկացվածության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունում ներդրված համընդհանուր ներառական կրթության համակարգը նպատակ ունի ապահովելու յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիությունն ու մասնակցային հավասար հնարավորությունները: Համաձայն ՀՀ Կառավարության՝ 2022 թվականի 11 օգոստոսի N 1265-Ն որոշման՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվել է ֆինանսավորման

մոդել, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ապահովել սովորողի համար խելամիտ հարմարեցումներ և մատչելի միջավայր՝ առավել ակտիվ ներգրավվածություն ապահովելով դասաուսումնական գործընթացներում:

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն Կառավարության որոշման ««1146.Հանրակրթության ծրագրի» 11016. Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման շրջանակներում ԿԳՄՍ նախարարությունը պետական բյուջետային միջոցներով կազմակերպում և համակարգում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ից 4-րդ դասարանների, ազգային փոքրամասնությունների սովորողների, ինչպես նաև տեսողության խնդիրներ ունեցող երեխաների բրայլյան տառատեսակով տպագրվող դասագրքերով ապահովման գործընթացը՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի նոյեմբերի 29-ի N 81-Ն և 2022 թվականի հունիսի 9-ի N 20-Ն հրամաններով հաստատված կարգերով: Ըստ 2023թ. տվյալների՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգում ներգրավված ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների շրջանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք է ունեցել 164 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները ստանում են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցություն:

Ազգային փոքրամասնությունների բնակավայրերի բոլոր դպրոցներն ապահովված են համացանցով, ընդգրկված են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում, “schools.am” տարածքում, և ունեն դպրոցական կայքեր:

Կրթությունն անավարտ թողնելու խնդրի վերաբերյալ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ երկխոսություն վարելու նպատակով պետական տարբեր կառույցների կողմից կազմակերպվում են քննարկումներ՝ փոքրամասնությունների համայնքների, բնակավայրերի ղեկավարների, ինչպես նաև համայնքներում գործող դպրոցների տնօրենների մասնակցությամբ: 2023թ. մայիսին կայացել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հանդիպումը եզդիական համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են եզդի երեխաների կրթության շարունակականության խթանումը, այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունների ներառականության բարձրացմանն ուղղված միջոցները:

2023 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար, Ազգային ժողովում եզդիական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանի կողմից կազմակերպվել է աշխատանքային քննարկում՝ նվիրված վաղ ամուսնության հարցերին, ազդեցություններին և այդ ոլորտում

օրենսդրական բարեփոխումների իրականացմանը: 2024թ. փետրվարին կազմակերպվել են խորհրդարանական լսումներ «Ամուսնության տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնական իրավունքների պաշտպանության համատեքստում» թեմայով: Քննարկումների արդյունքում որոշվել է նախաձեռնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք ներկայումս ընթացքի մեջ են (տե՛ս կետ 4):

Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար ***կրթության շարունակականության խրախուսման և բարձրագույն կրթության մատչելիության բարձրացման*** նպատակով ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի «Կրթություն» բաժնի «17.1.1. Ազգային փոքրամասնություններին օժանդակելու նպատակով բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) յուրաքանչյուր տարի մինչև 7 անվճար տեղերի հատկացում» կետով նախատեսված միջոցառման շրջանակում Կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 720-Ն որոշմամբ՝ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ընդունելության արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծված Հանրապետական ընդունող հանձնաժողովին լիազորություն է տրվել հաստատել և վերաբաշխել վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքած ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդների՝ անվճար մրցույթի արդյունքները՝ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հատկացրած տեղերի: Նախատեսված փոփոխությունը հնարավորություն է տվել 2023-2024 ուսումնական տարվանից, մրցութային հիմունքներով, ***մինչև 7 անվճար տեղ հատկացնել առավել բարձր միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին***՝ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության համար:

Ներկայումս շրջանառվում է Կառավարության որոշման նախագիծ, որի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել կրթաթոշակի տրամադրման նոր պայմաններ ու չափեր՝ պետության համար կարևոր և առաջնահերթ մասնագիտություններով բուհ ընդունված ուսանողների (այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների) համար:

(Կետ 4) Հավաքագրել վիճակագրական տվյալներ ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց և երեխաների դեմ գենդերային բռնության դեպքերի վերաբերյալ, ներառյալ վաղ և պարտադրված ամուսնությունների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև մշակել

համապարփակ քաղաքականություններ և միջոցներ՝ այս խնդրի դեմ պայքարելու նպատակով՝ իրավապահ մարմինների և սոցիալական ծառայության ներկայացուցիչների հետ համագործակցությամբ և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավմամբ: Նման քաղաքականությունները պետք է լինեն փաստահեն, որպեսզի ի հայտ բերեն վաղ և պարտադրված ամուսնությունների սոցիալական, տնտեսական և մշակութային դրդապատճառները: Այս քաղաքականությունները պետք է ուղղված լինեն խոցելի խմբերին համայնքային խնամքի տրամադրմանը և հզորացնեն վստահությունը խմբերի, անձերի, պատկան մարմինների միջև, ինչպես նաև ներառեն դպրոցներում և համայնքերում՝ ծնողների շրջանում տեղեկատվական արշավների անցկացումը

2021թ. ընդունվել և 2022թ ուժի մեջ է մտել ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որով ***քրեականացվել են գենդերային բռնության մի շարք դրսևորումներ***: Մասնավորապես, օրենսգրքի 197-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսվել ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելու համար, որը կատարվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, շանտաժի, արժանապատվությունը նվաստացնելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ հարկադրանքի այլ եղանակով:

Քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսվել նաև առանց անձի նախնական և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության հղիության արհեստական ընդհատում կատարելու (հոդված 175) և հղիության արհեստական ընդհատմանը հարկադրելու համար (հոդված 176): Մի շարք հանցանքների պարագայում որպես ծանրացնող հանգամանք է նախատեսվել մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից արարքը կատարելը՝ այդպիսով առավել ծանր պատիժ նախատեսելով ընտանեկան բռնության դրսևորումների համար: ՀՀ քրեական օրենսգրքում սույն թվականի ապրիլի 12-ին ընդունված փոփոխություններով նաև որպես ծանրացնող հանգամանք է նախատեսվել նույն հանցանքների կատարումը զուգընկերոջ և նախկին զուգընկերոջ կողմից: Բացի այդ, նույն փոփոխություններով քրեական պատասխանատվություն է նախատեսվել հետամտման համար («stalking»):

ՀՀ իրավապահ մարմինների կողմից իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում հանցագործություններ կատարած անձանց, այդ թվում՝ գենդերային բռնության հանցագործություններ կատարած անձանց միասնական հաշվառումը և վիճակագրության ձևավորումը՝ բաղդատված ըստ տարիքի, սեռի, ազգային կամ էթնիկ պատկանելության, կրթության, սոցիալական կարգավիճակի, և

այլն: Վիճակագրական բաղդատված տվյալների հավաքագրումը հանցագործություններից տուժած անձանց շրջանում իրավական ներկա կարգավորումներով նախատեսված չէ: Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման՝ ***2023թ. Պաշտպանի աշխատակազմ ներկայացվել է մեկ դիմում՝*** ազգային փոքրամասնության համայնքներից մեկում ընտանեկան բռնության դեպքի վերաբերյալ:
Հայաստանը շարունակում է իրականացնել ***մանկական, վաղ և հարկադիր ամուսնությունները նվազեցնելու և վերացնելու քաղաքականություն և ծրագրեր՝*** ճանաչելով այն որպես վնասակար պրակտիկա, որը խախտում է աղջիկների իրավունքները: Սա ներառում է իրավական բարեփոխումներ, իրազեկության բարձրացման արշավներ, համայնքային մոբիլիզացման ջանքեր և աջակցության ծառայություններ մանկահասակ ամուսնության վտանգի տակ կամ դրանից տուժած աղջիկների համար:

Մասնավորապես ՀՀ գործող օրենսդրությամբ ամուսնության տարիքը 18 տարեկանն է: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձն առնվազն 18 տարեկան է: Այս առումով ամուսնության տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները արդեն մեկնարկել են, որի շրջանակում առաջարկվում է բացառել վաղաժամ (մինչև 18 տարեկան) ամուսնությունները: Ներկայացվող փոփոխությունները հնարավորություն կտան ՀՀ իրավասու մարմիններին առավել արդյունավետ կերպով իրականացնել երեխաների կրթական, առողջապահական և այլ ոլորտային քաղաքականությունը: 2024թ. հունիսի 12-ին կայացած նիստում Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է **Հայաստանում ամուսնության տարիքային նվազագույն շեմը 18 տարեկան՝ առանց բացառությունների սահմանելու նախագիծը**: 2024թ. սեպտեմբերի 11-ին օրենքն ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

(Կետ 5) Վերանայել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, ներառյալ Շրջանակային կոնվենցիային՝ ապահովելով, որ բոլոր շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ խորհրդակցություն է անցկացվել դրա բովանդակության վերաբերյալ: Այդ հիմքով իշխանությունները պետք է շարունակեն օրենքի ընդունման գործընթացը

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենսդրական երաշխիքների ստեղծումը նախատեսված է

ՀՀ կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ: «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համապատասխան լրամշակումը նախատեսված է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրով, որով լրամշակված նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի երկրորդ կիսամյակը:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը 2023թ-ին ներկայացվել է Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակին՝ փորձագիտական կարծիք տրամադրելու խնդրանքով, իսկ 2024թ-ին՝ նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության (DGII) համատեղ կարծիքին,որը հաստատվել է 2024թ. հունիսին կայացած լիագումար նիստի ժամանակ: 2024թ. հուլիսի 12-ից 13-ը Արդարադատության նախարարությունը և Ազգային ժողովը համատեղ կազմակերպել են «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի աշխատանքային քննարկում, որի ընթացքում ԱՆ և ԵԽ փորձագետները ներկայացրել են նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության (DGII) համատեղ կարծիքը: Միջոցառման արդյունքում ամփոփվել են օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները և նախանշվել են հետագա քայլերը: Ներկայումս «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը գտնվում է լրամշակման փուլում՝ համատեղ կարծիքի հիման վրա:

(Կետ 6) Շարունակել հակախտրականության վերաբերյալ համապարփակ իրավական դաշտի ստեղծման գործընթացը՝ խորհրդակցելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ

Ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության արգելքը, որը սահմնված է նախևառաջ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, ամրագրված է մի շարք ներպետական օրենսդրական ակտերով, ինչպիսիք են ՀՀ աշխատանքային, ընտանեկան, քրեակատարողական օրենսգրքերը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքն ու ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը:

ՀՀ քրեական օրենսգրքով **խտրականության համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:** Օրենսգրքի 203-րդ հոդվածով խտրականությունը բնորոշվում է որպես տարբերակված վերաբերմունքի դրսևորում, որը ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի

գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով:

Նշված արարքի համար որպես պատիժ սահմանվել է տուգանք՝ առավելագույնը նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով կամ հանրային աշխատանքներ՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով: Նույն հոդվածի 2-րդ մասով առավել ծանր պատիժ է նախատեսվում նույն արարքի համար, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել է խտրականության արգելքի սկզբունքը, իսկ խտրական վերաբերմունքի դրսևորման համար ամրագրվել է քրեական պատասխանատվություն՝ խտրականության դեմ պայքարի գործուն մեխանիզմների առկայությունն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության 2023թ. սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը: Վերջինիս «Իրավահավասարություն, խտրականության արգելք» վերտառությամբ 4-րդ գլխում ի թիվս այլնի նախատեսվում է ***«Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծի (այսուհետ սույն կետում՝ Նախագիծ) ընդունումը:*** Գործողությունների ծրագրով Նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի երկրորդ կիսամյակը: Օրենքի նախագծի նպատակն է ապահովել յուրաքանչյուր անձի և քաղաքացու նկատմամբ հավասար վերաբերմունք, նրանց իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ առանց խտրականության: Նախագծով նախատեսվում է Մարդու իրավունքների պաշտպանին իրավահավասարության և խտրակառննության վերացման մարմնի մանդատի շնորհումը, որը ենթադրում է Պաշտպանի մանդատի ընդլայնում՝ տարածելով այն նաև մասնավոր սեկտորում խտրականության դեպքերի նկատմամբ: Բացի այդ, նախատեսվում է, որ Պաշտպանը լիազորված կլինի խտրականության դեպքերով խտրականության ենթարկված անձի համաձայնությամբ կամ նրա անունից դիմել դատարան, ինչպես նաև իրականացնել հաշտարարության ընթացակարգ: Նախագիծը 2023 թվականի հուլիսին ներկայացվել էր Եվրոպայի խորհրդի

փորձագիտական կարծիքին, որը ստացվել է սույն թվականի մարտին: Ըստ այդմ, Նախագիծը լրամշակվել է և հունիսին անցկացվել են Նախագծի վերաբերյալ քննարկումներ պետական մարմինների, Ազգային ժողովի ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների լայն մասնակցությամբ: Նախագիծը նախատեսվում է ընդունել մինչև 2024թ. ավարտը:

Խտրականության բացառումն ամրագրվել է նաև ***«Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծում***, որտեղ, մասնավորապես, սահմանվում է, որ երեխայի իրավունքները պաշտպանելիս անհրաժեշտ է ապահովել «**խտրականության բացառումը՝ կախված երեխայի, նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից**», ինչպես նաև «երեխայի խնամքի, դաստիարակության և կրթության կայունության և շարունակականության ապահովումը՝ հաշվի առնելով երեխայի ազգային, կրոնական, մշակութային, լեզվական, հոգևոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները»:

Համընդհանուր ներառական կրթությունը ճանաչելով որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք՝ օրենքի նախագծով սահմանվում է, որ «ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է **յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը** և իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով պետական լիազոր մարմինների կողմից»:

«Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի ընդունումից հետո 2024թ. ընթացքում նախատեսում է աշխատանքներ իրականացնել մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտեր ընդունելու ուղղությամբ:

Ուսուցման և խնամքի հավասար հնարավորությունների, մատչելիության, հասանելիության և ներառականության սկզբունքներն ամրագրվել են 2020թ. ՀՕ-267-Ն որոշմամբ փոփոխված **«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում**, որով Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է **նախադպրոցական կրթության բնագավառի ներառականությունը, մատչելիությունը, հասանելիությունն ու որակը՝** որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման, զարգացման ու դաստիարակության, անվտանգ միջավայրի ստեղծման, կյանքի, առողջության պահպանման և ամրապնդման կարևոր երաշխիք: Փոփոխված օրենքով որպես առաջնայնություն է ճանաչվում նախադպրոցական ուսումնական հաստատություններում **երեխայակենտրոն, ներառական և զարգացնող միջավայրի ապահովումը**, որպես նախադպրոցական

կրթության խնդիրը է սահմանվում **որակյալ նախադպրոցական կրթություն տրամադրելու հավասար հնարավորությունների, ներառականության և մատչելիության ապահովումը խելամիտ հարմարեցումների միջոցով**:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել է **«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»** Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությամբ սահմանվում են 6 գերակայություններ՝ ըստ առկա խնդիրների ու ժամանակի մարտահրավերների: Ռազմավարությունն ու Միջոցառումների ծրագիրը մշակվել են միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հաշվի առնելով ՀՀ-ում բնակվող անձանց, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերն ու խնդիրները:

Ռազմավարական 6 գերակայություններն են՝

1. կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարում. Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովում և ընդլայնում,
2. սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության ձևերում գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազեցում և աշխատանքի պաշտպանության կառուցակարգերի բարելավում,
3. կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում, հավասար հնարավորությունների ընդլայնում և բարենպաստ միջավայրի ամրապնդում,
4. առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովում,
5. գենդերային բռնության և խտրականության հաղթահարում, կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում, հաղթահարում և բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանություն և աջակցություն,
6. կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդերաարձագանքող մոտեցումների ձևավորում, ներառական սկզբունքների ապահովում և իրազեկվածության բարձրացում:

Պետական համակարգի ընթացիկ բարեփոխումների շրջանակներում ՀՀ կառավարության կողմից նախաձեռնվել է ***սոցիալական ու գենդերային ներառականությանն ուղղված ռազմավարական ուղեցույց-փաստաթղթի մշակում,*** որը ներկայումս գտնվում է մեթոդաբանության վերջնականացման փուլում: Նախաձեռնությունը միտված է որոշումների կայացման գործընթացներն առավել արդար և փոխակերպող դարձնելուն՝ պահովելով «չեզոքությունից» դեպի

ներառականություն անցումը, այդ թվում՝ հանրային ծառայողների շրջանում համապատասխան վերապատրաստումների միջոցով:

(Կետ 7) Ձեռնարկել քայլեր՝ ուղղված բոլոր ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալների հավաքագրմանը՝ տարանջատված ըստ տարիքի, սեռի և աշխարհագրական բաշխման՝ ընդգրկելով բոլոր ոլորտները, ներառյալ կրթությունը, գենդերահեն բռնությունը և սոցիալական-տնտեսական մասնակցությունը, միաժամանակ հիմնված ինքնանույնացման սկզբունքի և համահունչ տվյալների պաշտպանության միջազգային չափանիշների վրա

Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի և ՀՀ Վիճակագրական կոմիտեի համատեղ քննարկման արդյունքում դիտարկվել է երկրի ոլորտային վարչական շտեմարաններում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տվյալների հնարավոր ներմուծման հարցը**:** Համապատասխան վարչական շտեմարանների տիրապետող գերատեսչությունների հետ քննարկվել է վարչական սկզբնաղբյուրներում ազգությունների մասին տվյալների ներմուծման հնարավորությունը և ստացված հետադարձ արձագանքների և դիտարկումների հիման վրա մշակվել է ***ԵԽ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի հարցերով կոմիտեի Հայաստանի 5-րդ ազգային զեկույցի վերաբերյալ ԵԽ կարծիքում վիճակագրության ոլորտին վերաբերող խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների ծրագրի նախագիծը:*** Սույն նախագիծը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կիրականացվի փաստաթղթի վերջնական լրամշակում, և նախանշված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով այն կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:

2022թ. *ՀՀ-ում իրականացվել է մարդահամար*, որը կազմակերպվել է ՀՀ կառավարության որոշումներով սահմանված ժամկետում (10 հոկտեմբերի 2018 թվականի N 1115-Ն) և հաստատված մարդահամարի ծրագրով (28 հուլիսի 2022 թվականի N 1149-Ն), ինչպես նաև ՄԱԿ-ի միջազգային հանձնարարականների հիման վրա մշակված և Վիճակագրության պետական խորհրդի որոշումներով հաստատված մեթոդաբանությամբ, հրահանգներով և ցուցումներով: 2023թ. հրապարակվել է ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ մշտական բնակչության կազմը՝ ըստ ազգությունների, սեռի, քաղաքային/գյուղական և տարիքային խմբերի, ք.Երևանի/մարզերի բաշխումով, ըստ մայրենի լեզվի և այլ լեզուների տիրապետման, կրոնական դավանանքի, կրթական մակարդակի, ամուսնական կարգավիճակի, ինչպես նաև 2018-2022թթ. ժամանակահատվածում բնակչության միգրացիոն տեղաշարժերի վարչական գրանցումների և կենդանի ծնվածների ու մահացածների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելության (տե՛ս Հավելված 1 և Հավելված 2):

Վերջին տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները օգտվում են Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանի ծառայություններից (2020-2023 թթ. վիճակագրության համաձայն. 2020 թվականին՝ 3 անձ, 2021 թվականին՝ 12 անձ, 2022 թվականին՝ 20 անձ, 2023 թվականին՝ 24 անձ): Հարկ է նշել, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են օգտվել օրենքով սահմանված կարգով տրամադրվող աջակցության բոլոր ծառայություններից:

(Կետ 8) Ընդլայնել աջակցությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ իրենց լեզվական, կրոնական և մշակութային ինքնությունը պաշտպանելու և զարգացնելու հարցում: Անհրաժեշտ են նպատակաուղղված քայլեր՝ ազգությամբ փոքրաթիվ ազգային փոքրամասնությունների մշակույթի կարևոր բաղադրիչները ավելի կենսունակ դարձնելու համար: Պետք է մշակվի, կիրառվի և գնահատվի ազգային փոքրամասնությունների հարցերով համապարփակ ազգային ռազմավարություն՝ ազգային փոքրամասնությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ

ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք: Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավուքների պաշտպանությունը երաշխավորվում է նաև «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք հոդվածներով: Վերոնշյալ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը և զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը», իսկ 9-րդ հոդվածը յուրաքանչյուրի համար երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում մշակութային կյանքին մասնակցելը և մշակութային գործունեություն իրականացնելը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, 6-րդ հոդվածը՝ մշակութային արժեք է համարում նաև լեզուները, ազգային ավանդույթները և սովորույթները, աշխարհագրական տեղանունները:

2020թ. փոփոխված «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ Հոդվածի 6-րդ կետով սահմանվում է, որ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել

իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ»: Օրենքի 7-րդ Հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ «Ազգային փոքրամասնությանը պատկանող երեխայի ընդունելությունը հաստատություն կարող է կատարվել երեխայի մայրենի լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում, իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կարող է կատարել ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը)»:

Ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը՝ բանավոր և գրավոր, երաշխավորվում է նաև «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծում, ըստ որի՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն իրենց լեզուն անարգել գործածել իրենց անձնական կյանքում և հասարակական վայրերում, ինչպես նաև փոխանակել և տարածել տեղեկատվություն իրենց լեզվով:

Ազգային *փոքրամասնությունների կրթական-մշակութային գործունեությանը* նպաստելու նպատակով 2019-2023թթ ընթացքում տարեկան 20 մլն դրամ է հատկացվել ՀՀ վարչապետի աշխատակազմին առընթեր Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամ հանդիսացող 11 ազգային համայնքները ներկայացնող կազմակերպություններին: Աշխատանքներ են տարվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ հրատարակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով պարբերականների թվայնացման գործընթացի շարունակականությունը ապահովելու ուղղությամբ: «Հայ մամուլ» շտեմարանում ազգային փոքրամասնությունների հրատարակած բոլոր պարբերականները գրառված են, տեղադրված են նաև մեծ մասի թվային տարբերակները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ «Ոչ պետական մամուլի հրատարակում» դրամաշնորհային ծրագրի առաջնահերթություններից է ***ՀՀ-ում գործող ազգային փոքրամասնությունների պարբերականներին աջակցելը:*** Այն միտված է ազգային փոքրամասնությունների լեզվի, կրոնի պահպանմանը, համայնքի մշակութային և հասարակական կյանքի լուսաբանմանը, մշակութային ժառանգության հանրահռչակմանը: 2023թ. ֆինանսավորվել է ազգային փոքրամասնությունների 9 պարբերական: Նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի շրջանակում «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպությունը ֆինանսական (700 հազ. դրամ) աջակցություն է ստացել եզդիների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և տարածման նպատակով մշակութային ծրագրեր իրականացնելու համար:

2019-2023թթ. «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների ներկայացված են Հավելված 3-ում:

Հայաստանի ազգային գրադարանում 2019-2022թթ. դրությամբ առկա է ***ազգային փոքրամասնությունների լեզուներով գրականություն***, այդ թվում. ռուսերեն՝ շուրջ 1800 միավոր՝ գեղարվեստական, կրոնական, լեզվաբանական, փիլիսոփայական, արվեստին, պատմությանը, բնական գիտություններին վերաբերող գրքեր; քրդերեն՝ 158 միավոր; հունարեն՝ 40 միավոր; եզդիերեն՝ 7 միավոր; պարսկերեն՝ 5 միավոր; վրացերեն՝ 8 միավոր, ուկրաիներեն՝ 3 միավոր դասագրքեր: ՀԱԳ Գրատպության թանգարանում ցուցադրվում է ազգային փոքրամասնությունների մամուլից՝ Հայաստանի ուկրաինական, լեհական, հրեական, քրդական, եզդիական համայնքների պարբերականները:

ՀՀ կառավարության 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման ծրագրի շրջանակում եզդիաբնակ ամենամեծ համայնքում՝ Ալագյազում, կառուցվում է 144 սանի համար նախատեսված մսուր մանկապարտեզ, ուր հաճախելու հնարավորություն են ունենալու համայնքի 11 բնակավայրերի նախադպրոցական տարիքի երեխաները: Մանկապարտեզը նախատեսվում է շահագործման հանձնել 2024 թվականին: Նույն համայնքում նախատեսվում է կառուցել նաև ազգությամբ եզդի Ռոման և Մալխաս Ամոյանների անվան ըմբշամարտի մասնագիտացված մարզադպրոց:

2020-2023թթ. ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդում հաստատված ՀՀ պետական բյուջեով նախատեսված ամենամյա դրամաշնորհային ծրագրերի հաշվին իրականացվել են ծրագրեր, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, որոնք ներկայացված են Հավելված 4-ում:

Ազգային փոքրամասնություններին վերաբերող քաղաքականության և ռազմավարություն մշակելու վերաբերյալ ընթանում են նախնական քննարկումներ Արտաքին գործերի նախարարության համակարգմամբ՝ 2024թ. կազմավորված միջգերատեսչական խմբի շրջանակներում:

(Կետ 9) Ձեռնարկել ակտիվ քայլեր՝ Հայաստանի էթնիկ բազմազանության, ինչպես նաև հասարակությունում ազգային փոքրամանսությունների մշակույթի, պատմության, ավանդույթների, կրոնների և լեզուների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ և բարելավել միջմշակութային երկխոսությունը

ՀՀ մարզերի և Երևանի քաղաքապետարանի կայքէջերում «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում գործում է «Ազգային փոքրամասնություններ» ենթաբաժինը, որտեղ զետեղված է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը վերջիններիս թվի, պատմության, հուշարձանների, մշակութային իրադարձությունների և ունեցած առաջընթացի վերաբերյալ: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունում գործում է

ազգային փոքրամասնություններին պատկանող աշակերտների տվյալների բազա՝ վերջիններիս իրենց ազգային տոներին կամ այլ միջոցառումներին ներգրավելու և նրանց մասնակցությունն այդ միջոցառումներին խրախուսելու նպատակով:

2022թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի ասոցացված դպրոցների ցանցում ներառված դպրոցների համար Կրթության զարգացման և նորարարության կենտրոն («ԿԶՆԱԿ») հիմնադրամը «Երևան իմ սեր հիմնադրամի» հետ համատեղ կազմակերպել էր առաջնություն՝ «Միջմշակութային հաղորդակցում, տարբեր մշակույթների և ժառանգությունների արժևորում» թեմայով Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի սովորողների այցը եզդի և ասորի համայնքներ՝ նրանց մշակույթի ուսումնասիրման նպատակով: Ամփոփիչ միջոցառմանը ազգային փոքրամասնությունները մասնակցում էին որպես հրավիրյալներ:

2022թ. նոյեմբերի 29-ին ԿԶՆԱԿ նախաձեռնությամբ տեղի է ունեցել հանդիպում ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, որին ներկա էին ասորական թեմի Արևելքի Ասորական եկեղեցու քահանա Նիկոդիմ Յուխանաևը և ասորական համայնքի ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Զեմֆիրա Միրզոևան, Հայաստանում հրեական համայնքի նախագահ՝ Ռիմա Վարժապետյան-Ֆելլերը և հունական համայնքի ներկայացուցիչ՝ Էլլադա Ռաֆայելիդիսը: Հանդիպման նպատակն էր փորձել վերհանել համայնքների ուսումնական խնդիրները, քննարկել ու իրականացնել ծրագրեր, որոնք հասարակության ուշադրությունը կհրավիրեն մեր երկրի կարևոր հատվածի՝ կողք կողքի ապրող տարբեր ազգերի ու ազգությունների, նրանց ինքնության, մշակույթի, սովորույթների ու ավանդույթների ճանաչման, ինչպես նաև ուսումնական խնդիրների վերհանման և լուծման ուղիների որոնման համար:

Հայաստանի Հանրապետությունում շարունակվում է ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացը, որի նպատակն է հավաքագրել, գրանցել երկրում առկա կենսունակ և անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային արժեքները՝ դրանց պահպանության ուղղությամբ ծրագրեր և միջոցառումներ իրականացնելու համար: Այդ գործընթացի շրջանակում կարևորվում է ոչ միայն հայկական, այլև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ոչ նյութական մշակութային արժեքների գույքագրումը:

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1951- Լ որոշմամբ ընդունվել է **Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027թթ. ռազմավարությունը**, որն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, կրոնի, ավանդույթների պահպանման և տարածման համար պայմանների ստեղծմանը, այդ թվում՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերականներին աջակցությանը, Հայաստանի մարզերում ազգային տոների, ավանդույթների,

ժողովրդական երաժշտությանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական ժառանգության ցանկերում ընդգրկված ազգային նվագարանների և պարի հանրահռչակմանն ուղղված միջազգային փառատոների կազմակերպմանը՝ համայնքային (ներառյալ ազգային փոքրամասնությունների) ստեղծագործական ներուժի ներգրավվմամբ և հասարակության լայն շերտերի՝ այդ թվում ներառական խնդիրներ ունեցող անձանց մասնակցությամբ:

Հատուկ ուշադրություն է դարձվում ***ՀՀ ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգությանն ու անշարժ հուշարձանների պահպանությանը***: Ներկայումս վերականգնվում է ՀՀ Լոռու մարզի Ամրակից բնակավայրի ռուսական Սբ. Նիկոլայ Հրաշագործ եկեղեցին, նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կավարտի հունական եկեղեցու վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի ձեռքբերումը և առաջիկայում քննարկվելու է Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Մադան թաղամասի հունական եկեղեցու միջնաժամկետ ծախսային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը: «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2003թ. դեկտեմբերի 24-ի N 1793-Ն որոշմամբ հաստատված հուշարձանների պետական ցուցակում որպես տեղական նշանակության պատմամշակութային հուշարձան ընդգրկվել է Կոտայքի մարզի Հանքավան գյուղում գտնվող հունական Եկեղեցին (19-րդ դ.):

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում գործող ազգային փոքրամասնությունների 11 հասարակական կազմակերպու-թյունների՝ «Ուկրաինա» Հայաստանի Ուկրաինացիների Ֆեդերացիա» ՀԿ, «Պոնտի» Երևանի հունական» ՀԿ, «Սինջար» եզդիների ազգային միավորման, «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնի, «Իվերիա» վրացական բարեգործական կազմակերպության և այլոց հետ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ Երևանում և մարզերում ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների մասնակցությամբ ավանդաբար անցկացվում են գեղարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցահանդեսներ և երաժշտական փառատոներ: 2020-2023թթ. համապատասխանաբար կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոներ, համերգներ, ցուցահանդեսներ ու երեխաների համար ուսուցողական գեղանկարչական ծրագրեր:

2022 թ. ԱՊՀ համագործակցության երկրների կողմից հայտարարված ժողովրդական ստեղծագործության և մշակութային ժառանգության տարվա շրջանակում Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղի ունեցավ «Գյումրի. վարպետաց քաղաք» փառատոնը, որի նպատակն էր մշակութային մեկ հարթակում միավորել արդի շրջանի ժողովրդական արհեստները, բարձրացնել դրանց ճանաչելիությունը և

նպաստել այդ ժառանգությունը կրող ու փոխանցող անհատների ստեղծագործական առաջխաղացմանը: Փառատոնին մասնակցեցին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների ստեղծագործական խմբերը՝ այդ թվում ներկայացվեցին ռուսական և բելառուսական համայնքների գեղարվեստական աշխատանքները, երգն ու պարը:

Իրականացվել են միջոցառումներ մշակույթի տարբեր ոլորտներում: 2023թ. «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կայացել է «Տանիքը՝ Հայաստան» խորագրով համերգ՝ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: Երեկոն մեկնարկել է համերգասրահի ներքնահարկում՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների ղեկավարների և պատկան մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ պանելային քննարկմամբ: Դահլիճի ճեմասրահում զուգահեռ կայացել է կերպարվեստի և կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդես, որից հետո ազգային երգի, պարի խմբերը և մենակատարները հանդես են եկել տոնական համերգային ծրագրով: Ծրագրի շրջանակում իրականացվել է 1 համերգ, 1 ցուցահանդես, 1 հանդիպում-քննարկում: Համերգին ներկա են գտնվել 400 հանդիսատես:

2023 թվականի ընթացքում կազմակերպվել են ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոն, համերգներ, ցուցահանդեսներ: ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում կազմակերպվել են դպրոցահասակ եզդի 60 երեխայի համար գեղագիտական ուղղվածությամբ «Լոռվա գունապնակ» խորագրով դասընթացներ:

2021 թվականին Հայաստանի Հանրապետությունն իր տոների և հիշատակի օրերի ցանկում ամրագրել է **ազգային փոքրամասնությունների օր,** իսկ 2024 թվականին ՀՀ ազգային ժողովի որոշմամբ օգոստոսի 3-ը սահմանվեց **2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր**:

(Կետ 10) Ապահովել փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես ասորերենով ուսուցման առաջարկը; դրան աջակցելու համար ապահովել ուսուցիչների համապատասխան վերապատրաստումը և նորացված ուսումնական նյութերի առկայությունը, աջակցել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին՝ կիրակնօրյա դպրոցներ և փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական նախաձեռնություններ առաջարկներ ներկայացնելու հարցում

Ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված համայնքներում տարրական կրթությունը հասանելի և մատչելի է էթնիկ լեզուներով: Այն բնակության վայրերում, որտեղ ազգային փոքրամասնությունների թիվը փոքր է, նախատեսված է նաև լեզվի ֆակուլտատիվ ուսուցման հնարավորություն: Մշակված է Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանը՝ որի համաձայն, պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում

ընդգրկված ազգային փոքրամասնությունների «Մայրենի լեզու և գրականություն» առարկայի ուսուցման համար ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվին և գրականությանը շաբաթվա ընթացքում հատկացված է դասաժամերի հետևյալ քանակը. տարրական դպրոց՝ 4 դասաժամ, հիմնական դպրոց՝ 3 դասաժամ, հիմնական դպրոց՝ 3 դասաժամ:

2021թ. հաստատվել է «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների և դրանց ներդրման կարգը»: Կարգի համաձայն նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման առաջնահերթություն է տրվում նաև այն բնակավայրերին, որոնք բնակեցված են հիմնականում ազգային փոքրամասնություններով: Նշված մոդելները հնարավորություն կընձեռեն մեծացնել նախադպրոցական ծառայություններում ընդգրկված երեխաների թիվը, ապահովել մատչելիությունը:

Շիրակի, Արագածոտնի, Արմավիր և Արարատի մարզերի մի շարք հանրակրթական դպրոցներում ստեղծվել են նախակրթարաններ, որտեղ օրվա առաջին կեսին գործում են ազգային փոքրամասնությունների 4-5 տարիքային խմբի երեխաների համար նախատեսված դասարաններ:

Ասորերեն լեզու և գրականություն առարկային 2019-2023 թվականներին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանների համաձայն 1-12-րդ դասարաններում հատկացված է եղել շաբաթական 34 դասաժամ: Դասաժամերի բաշխումն ըստ դասարանների կատարվել է նրանց գործող ուսումնական ծրագրերին համապատասխան: Երևանում Ա.Պուշկինի անվ. N 8 հիմնական դպրոցում և Երևանի Ա.Մարգարյանի անվ. N 29 ավագ դպրոցում ասորերենը դասավանդում է որպես հիմնական առարկա:
Արմավիրի մարզի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում են 11 ասորի երեխաներ: Մարզում գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատություններից մեկում գործում է ասորերենի խմբակ: Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրի «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում դասավանդվում է ասորերեն՝ արտադպրոցական խմբակի ձևով:

Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում ուսուցանվում է ասորերեն խմբակի շրջանակներում: Առկա են ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարաններ (1-ից 12-րդ դասարաններ), որտեղ կրթություն են ստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ՝ մասնավորապես ասորիներ:

2019-2023 թթ. դպրոցում պարբերաբար անցկացվել են տարբեր միջոցառումներ, բաց դասեր, սեմինարներ ասորի սովորողների մասնակցությամբ ասորերենով,

մասնավորապես՝ մայրենի լեզվի միջազգային օրվան, ասորական Նոր տարվան (Հաբ-Նիսան, որը 2008 թվականի ապրիլի մեկից հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից) նվիրված միջոցառումներ:

Դիմիտրովի և Վերին Դվինի ասորական համայնքներում գործում են հանրակրթական միջնակարգ դպրոցներ, որտեղ ազգությամբ ասորի աշակերտներն իրենց կրթությունը ստանում են ռուսերեն ուսուցման դասարաններում՝ ասորերենի պարտադիր ուսուցմամբ: Ազգությամբ եզդի աշակերտներն իրենց մայրենի լեզուն ուսումնասիրում են արտադասարանական խմբակներին հատկացված ժամերի ընթացքում: Դպրոցներն ապահովված են համապատասխան դասագրքերով և ուսումնաօժանդակ գրականությամբ:

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքում գործող «Աթուր» և «Գաբբարա» հասարակական կազմակերպությունները զբաղվում են ասորիների կրթական, մշակութային, սոցիալական իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում են ազգային և կրոնական տոներին նվիրված տարաբնույթ ազգագրական միջոցառումներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունենում նաև մանկապարտեզի սաները: Արզնի համայնքի «Այյոնուշկա մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների (ասորիներ) համար գործում է ռուսաց լեզվով ուսուցմամբ տարատարիք խումբ: Ուսուցումը իրականացվում է հիմք ընդունելով նախադպրոցական կրթական համալիր ծրագրերը՝ ռուսերենով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

ՀՀ ազգային փոքրամասնությունների համայնքներում (բելառուսական, վրացական, ուկրաինական, հունական, հրեական, գերմանական, լեհական) գործում են ***կիրակնօրյա դպրոցներ***՝ բացառությամբ եզդիական, քրդական, ասորական և ռուսական համայնքների, քանի որ այդ լեզուները պետական չափորոշիչների շրջանակում դասավանդվում են հանրակրթական դպրոցներում: Կիրակնօրյա դպրոցները կազմակերպվում են ազգային համայնքները ներկայացնող ՀԿ-րի կողմից՝ պետական դրամաշնորհների շրջանակում: Կիրակնօրյա դպրոցների դասընթացները, ինչպես նաև տարատեսակ մշակութային միջոցառումներն ու հավաքները մեծամասամբ իրականացվում են պետության կողմից ազգային փոքրամասնություններին անհատույց տրամադրված Ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային կենտրոնում:
Ազգային փոքրամասնությունների լեզուների պաշտպանությանն ուղղված գործողությունները ներկայացված են նաև Զեկույցի՝ Շրջանակային կոնվենցիայի կատարմանն ուղղված միջոցառումների հատվածում (Հոդվածներ 14.1, 14.2 և 14.3):

(Կետ 11) Ձեռնարկել քայլեր՝ ընդլայնելու եզդիերենով ուսուցման առաջարկը ընդհանուր ուսումնական ծրագրի հիմնական և միջնակարգ մակարդակներում, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստման և ֆինանսական խթանների

միջոցով եզդի ուսանողների վերապատրաստվելը և որպես ուսուցիչներ աշխատելը: Միևնույն ժամանակ, իշխանությունները պետք է ներդնեն եզդիերենով հետագա կրթություն (մասնագիտական, մեծահասակների համար նախատեսված և շարունակական)

2023 թվականի դրությամբ ազգային փոքրամասնությունների աշակերտների համար ՀՀ մարզերի դպրոցներում ուսուցանվում է «Եզդիերեն», «Քրդերեն» և «Ասորերեն» առարկաները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ հրատարակվում են ազգային փոքրամասնությունների տարրական, միջին և ավագ դպրոցների համար նախատեսված դասագրքերը: Դասագրքերի և առարկայական ծրագրերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են «Հայկական կրթական միջավայր» պորտալի «Պաշարների շտեմարան» ենթակայքում: 2023 թվականի ընթացքում տպագրվել է ընդհանուր թվով 941 դասագիրք (1-ին դասարանի համար 198 «Եզդիերեն այբուբեն», 26 «Քրդերեն այբուբեն», 2-րդ դասարանի համար 25 «Քրդերեն», 3-րդ դասարանի համար 30 «Քրդերեն», 3-րդ, 4-րդ և 5-րդ դասարանների համար 315 «Եզդիերեն», 5-րդ դասարանի համար 84 «Եզդի գրականություն», 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների համար 132 «Եզդիերեն», 7-րդ և 8-րդ դասարանների համար 22 և 17 «Քրդերեն», 8-րդ և 9-րդ դասարանների համար 37-ական «Եզդի գրականություն», 9-րդ դասարանի համար 18 «Քրդերեն» դասագիրք):

Գործածության է դրված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և տպագրված ազգային լեզվով դասագրքերը: Պետական միջոցներով՝ անկախ երեխաների թվից ապահովվում է համապատասխան լեզվի ուսուցումը: Ազգային փոքրամասնությունների աշակերտները ակտիվ մասնակցություն են ունենում դպրոցականների առարկայական օլիմպիադաներին, մարզային («Ոսկե սերմեր» 4-րդ մրցանակաբաշխություն, «Մենք մեր տանն ենք» մշակութային միջոցառում), հանրապետական միջոցառումներին, ազգային տոներին նվիրված մարզային («Այդա Թաուսի Մալաք», «Աիդա Եզդիդ»), համայնքային և դպրոցական, ինչպես նաև մարզական միջոցառումներին:

2021 թվականից փորձնական ներդրվել է ***ուսուցիչների կամավոր ատեստավորման համակարգը***: 2022թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշումը: Կամավոր ատեստավորման արդյունքում 70 տոկոս և բարձր արդյունք ապահոված ուսուցիչների համար սահմանվում է 30-50 տոկոս հավելավճար՝ ըստ հավաքած միավորների: Ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչները

պարբերաբար մասնակցում են ուսուցիչների կամավոր ատեստավորմանը: 2024թ. տարեսկզբի տվյալներով ատեստավորվել է ազգային փոքրամասնությունների 5 ուսուցիչ: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն գործում են նաև ուսուցիչների խրախուսման մեխանիզմներ, որոնց շրջանակում 2023 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով եզդիերեն դասավանդող 5 ուսուցիչ պարգևատրվել է շնորհակալագրերով:

(Կետ 12) Ճկուն մոտեցում ցուցաբերել որպես ազգային փոքրամասնություններ նույնականացվող և ազգային փոքրամասնությունների խորհրդին միանալու ցանկություն ունեցող փոքրամասնությունների խմբերի շահագրգիռ ներկայացուցիչների հանդեպ, ինչպես նաև բարձրացնել խորհրդի գոյության, մանդատի և գործունեության մասին իրազեկվածության մակարդակը

Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդն իր գործունեության ընթացքում բաց է ազգային փոքրամասնությունների ցանկացած խմբի ներկայացուցիչների հետ քննարկումների համար: ***Նիստերին կարող են մասնակցել նաև Խորհրդի անդամ չհանդիսացող անձինք***: Այսպես, ՀՀ-ում ուդիական համայնքը ներկայացնող «Պատմական Աղվանքի ուդի ժողովրդի վերածնունդ» ՀԿ-ն 2023թ. ի վեր մասնակցում է Խորհրդի նիստերին: 2023թ. այս ՀԿ-ի ներկայացված հայտի հիման վրա նրան հատկացվեց պետական բյուջեից տրամադրվող գումարի մասնաբաժին, որով իրականացրել են իրենց միջոցառումները: 2024թ. նոր ծրագրերի շրջանակում ընդունվել է նաև սույն ՀԿ-ի հայտը, որը մյուս հայտերի հետ մեկտեղ հաստատվել է Խորհրդի նիստում:

29.12.2023թ. Վարչապետի N 1297-Լ որոշմամբ մի շարք փոփոխություններ են կատարվել Վարչապետի մայիսի 3-ի «Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ ստեղծելու և խորհրդի կազմը հաստատելու մասին» N 486-Լ որոշման մեջ: Որոշման համաձայն՝ Խորհրդի նախագահը վարչապետի աշխատակազմի ղեկավարն է, իսկ Խորհրդի անդամների կազմում ընդգրկվել են նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Արդարադատության նախարարների տեղակալները:

Որոշման մեջ կատարված փոփոխությունները նպատակ ունեն բարձրացնել Խորհրդի կարգավիճակն ու նրա աշխատանքի արդյունավետությունը, ազգային փոքրամասնությունների խնդիրների քննարկումն իրականացնել պետական կառավարման մարմինների ղեկավարության անմիջական մասնակցությամբ, ովքեր անհրաժեշտության դեպքում խնդիրների լուծումը կտեղափոխեն համապատասխան կառավարման մարմիններ:

(Կետ 13) Հավաքագրել տվյալներ ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ, հատկապես զբաղվածության, համապատասխան ենթակառուցվածքների հասանելիության և կլիմայի

փոփոխության ազդեցության ոլորտներում: Դրական քայլեր պետք է ձեռնարկվեն՝ ուղղված նշված անհավասարությունները վերացնելուն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ սերտ համագործակցությամբ՝ նպատակ ունենալով ակտիվորեն խթանել վերջիններիս մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքում

ՀՀ մարզերում, այդ թվում՝ **ազգային փոքրամասնություններով առավել խիտ բնակեցված Արարատի, Կոտայքի, Լոռու, Արմավիրի և Արագածոտնի մարզերում** պետական աջացությամբ իրականացվող գյուղատնտեսական ոլորտի բոլոր ծրագրերը նպատակաուղղված են ջրային և հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, կլիմայի փոփոխության հարմարվողականությանը և մեղմմանը, բնակլիմայական աղետների հետևանքով առաջացող վնասների կանխարգելմանը: Համաձայն դիտարկումների, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմմանն ուղղված միջոցառումների չիրականացումը կարող է հանգեցնել մշակաբույսերի բերքի որակի, բերքատվության անկման և համախառն արտադրանքի նվազմանը, մասնավորապես Արարատյան հարթավայրում, որտեղ մշակությունը բացառապես իրականացվում է ջրովի պայմաններում:

2021 թվականին Կառավարության կողմից ընդունվել է «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության N 749-Լ որոշումը, որի միջոցառումների համաձայն մշակվել են չորս մարզերի Շիրակ, Տավուշ, Սյունիք և Գեղարքունիք մարզերի **կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերը:** ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1222-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարումն ապահովող 2023-2026թթ. միջոցառումների ծրագիրը, որում ներառված են գյուղատնտեսության ոլորտում **կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղված շուրջ 20 միջոցառումներ**:

ՀՀ վարչապետի կողմից հանձնարարական է տրված Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Արդարադատության նախարարություններին և մարզպետներին ակտիվացնել համագործակցությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված համայնքների (այդ թվում նաև խոշորացված համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի) ղեկավարների հետ՝ սոցիալ-տնտեսական, զբաղվածության, ենթակառուցվածքների հասանելիության և կլիմայի փոփոխության ազդեցության ոլորտներում իրավիճակի մշտադիտարկման, առաջացած խնդիրների լուծման և համատեղ աշխատանքի իրականացման նպատակով: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում և խոշորացված

համայնքների ազգային փոքրամասնություններով բնակավայրերում իրականացվող ծրագրերին, ապա համայնքների խոշորացման ծրագրին չմասնակցած համայնքներն արդեն իսկ 2021 թվականից մասնակցել են սուբվենցիոն ծրագրերին, որոնց նպատակն է հնարավորինս բարելավել ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական իրավիճակը:

2021 թվականին իրականացվել է 6 ծրագիր, 2022 թվականին՝ 7 ծրագիր, 2023 թվականին՝ 9 ծրագիր, 2024 թվականի համար 8 ծրագրի հայտ է ներկայացվել: «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու արդյունքում 2024 թվականի պետական բյուջեով բոլոր այն համայնքներին, որոնք չեն մասնակցել խոշորացմանը և ունեն փոքրաթիվ բնակչություն, դոտացիան ամրագրվել է 50 մլն դրամ: 2024 թվականին նախատեսված ծրագրերից բացի, կա ևս 3 խոշոր ծրագիր, որոնց նախապատրաստական աշխատանքները մեկնարկել են: Ըստ այդմ՝ նախագծման աշխատանքներ են իրականացվում Արմավիրի մարզի Ֆերիկ եզդիաբնակ համայնքի և մարզի այլ համայնքների հետ հաղորդակցություն ապահովող 3 կմ ճանապարհահատվածի շինաշխատանքների համար, որի արժեքը կկազմի շուրջ 150 մլն դրամ, Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի Օթևան բնակավայրի միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների համար, որի արժեքը կկազմի շուրջ 100 մլն դրամ և Շամիրամ համայնքի գազիֆիկացման աշխատանքների համար, որի արժեքը կկազմի շուրջ 400 մլն դրամ: Ընդհանուր առմամբ՝ շուրջ 1.8 մլրդ դրամի ծրագիր է իրականացվել 2021-2024 թվականներին, որից 914 մլն եղել է պետական բյուջեի համաֆինանսավորումը, 585 մլն համայնքային համաֆինանսավորումն է, ներգրավվել են նաև այլ միջոցներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ հաստատվել էր նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը: 2023թ. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից Հայաստանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմվել է «Կլիմայի փոփոխության ազդեցությունը կենսապահովման և պարենային ապահովության վրա» զեկույցը, որն անդրադառնում է ՀՀ մարզերում (այդ թվում՝ ազգային փոքրամասնություններով առավել խիտ բնակեցված Արարատի, Կոտայքի, Լոռու, Արմավիրի և Արագածոտնի մարզերում) գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցությանը:

(Կետ 14) Երկխոսություն վարել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ տարածքային կամ վարչական բարեփոխումների հետ կապված հարցերի շուրջ և ապահովել նախապես անցկացվող և բովանդակալից խորհրդակցությունների անցկացումը մինչև ցանկացած ապագա համախմբումը: Իշխանությունները պետք է նաև ապահովեն, որ ներկայիս առանձին

համայնքները բավարար միջոցների հասանելիություն ունենան հավասար հիմունքներով՝ համայնքներում ազգային փոքրամասնությունների իրավունքներին շարունակական հասանելիություն ապահովելու նպատակով

ՀՀ կառավարության՝ 2024թ. հունվարի 4-ին կայացած նիստում ՀՀ վարչապետն անդրադարձել է ազգային փոքրամասնություններով բնակեցված առանձին համայնքների (բնակավայրերի) և խոշորացված համայնքների կազմում ընդգրկված համապատասխան բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակին, առկա դժվարություններին, թերություններին և առաջիկա անելիքներին, և հանձնարարություն է տվել ստեղծված վիճակը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

Ի կատարումն վերոհիշյալ հանձնարարականի՝

- Խոշորացված համայնքների կազմում չընդգրկված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված առանձին համայնքների (բնակավայրերի) համար հատկացվող սուբվենցիոն միջոցներն ավելացել են 15%-ով,
- փոփոխություն է կատարվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն մինչև 3500 բնակիչ ունեցող համայնքներից (այդպիսիք թվով 8 են և բոլորը՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված համայնքներ) յուրաքանչյուրին՝ սկսած 2024թ. հունվար ամսից հատկացվում է 50 մլն դրամ դոտացիա,
- սահմանվել է ազգային փոքրամասնություններ ընդգրկող համայնքներում քննարկումների կազմակերպման գրաֆիկ՝ ապահովելով ազգային փոքրամասնությունների մասնակցությունը,
- ապահովել ազգային փոքրամասնությունների համայնքներում իրականացվող աշխատանքների, այդ թվում պետական բյուջեից հատկացվող միջոցների օգտագործման մասին լայն իրազեկում:

ՄԱՍ 2: Շրջանակային կոնվենցիայի կատարմանն ուղղված միջոցառումներ

- ✓ ***Հոդվածներ 1 և 2***
  -Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:
  -Սույն Շրջանակային կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարիդրացիության, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերը շարունակում են մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների շարքում, այդ թվում՝ ռասիզմի, խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարին ուղղված ջանքերի միջոցով: Հայաստանը ակտիվ քայլեր է ձեռնարկում ցեղասպանությունների կանխարգելման օրակարգի առաջմղման ուղղությամբ՝ միջազգային համագործակցության հարթակներում հանդես գալով թեմատիկ համապատասխան բանձևերով և այլ միջոցառումներով:

Հայաստանի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի միջազգային օրացույցում է ամրագրվել **Ցեղասպանությունների կանխարգելման և ցեղասպանության զոհերի հիշատակի օրը,** որը նշվում է յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 9-ին: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում ներկայացվում է Ցեղասպանության կանխարգելման մասին Հայաստանի կողմից ավանդաբար հեղինակվող երկամյա բանաձևը, որն ընդունվում է կոնսենսուսով՝ միջտարածաշրջանային լայն աջակցությամբ (բանաձևը համահեղինակում է շուրջ 60 երկիր): Բանաձևն անդրադառնում է ցեղասպանությունների և վայրագությունների կանխարգելման հետ կապված այնպիսի թեմաների, ինչպիսիք են ժխտողականության դեմ պայքարը, կրթությունը, գենդերային ասպեկտները, նոր տեխնոլոգիաները՝ հատուկ ուշադրության կենտրոնում պահելով վաղ նախազգուշացման համակարգերի և դրանց կարողությունների ամրապնդման հարցերը:

2020-2022թթ. ընթացքում Հայաստանն առաջին անգամ հանդիսացավ **ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի (ՄԻԽ)** ընտրված անդամ: ՄԻԽ անդամակցության

շրջանակներում Հայաստանը ջանքեր է գործադրել իր հանձնառություններն և առաջնայնություններն իրականացնելու ուղղությամբ՝ ուղղված ցեղասպանության և զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանը, էթնիկ ու կրոնական խմբերին թիրախավորող, այլատյացության հիմքով հանցանքների դեմ պայքարին, կանանց և երիտասարդության իրավունքների պաշտպանությանը, խաղաղ և ներառական հասարակությունների կայացմանը, այդ թվում՝ ազգային և միջազգային մեխանիզմների ամրապնդման միջոցով:

Հայաստանում պարբերաբար անցկացվող **«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումը**, որը փորձագիտական բովանդակային քնարկումների առումով իրեն ապացուցել է որպես միջազգային նշանավոր հարթակ, շարունակում է համախմբել մասնակիցների բազմազան զանգված, այդ թվում՝ կառավարությունների, ակադեմիական շրջանակների, իրավապաշտպանների, ցեղասպանագետների և այլ ոլորտների ներկայացուցիչների ներգրավվմամբ: ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պաշտպանության պատասխանատվության գրասենյակի աջակցությամբ և Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի (IAGS) և Զանգվածային ոճրագործությունների հանցագործությունների դեմ համաշխարհային գործողություն (GAAMAC) դաշինքի հետ համագործակցությամբ Հայաստանի կողմից պարբերաբար կազմակերպվող այս նախաձեռնությունը միտված է առաջ մղելու ցեղասպանությունների կանխարգելման օրակարգն ու դրա շուրջ միջազգային համագործակցությունը: 2022թ. դեկտեմբերին Երևանումկայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 4-րդ գլոբալ ֆորումի քննարկումների կենտրնում էր նոր տեխնոլոգիաների և մեդիայի դերը՝ ապատեղեկատվության տարածման և բացասական կարծրատիպերի միջոցով ռասիզմը, անհանդուրժողականությունն ու այլատյացությունը տարածելու և ինքնության հիմքով զանգվածային ոճրագործությունների ռիսկերի կառավարման տեսակետից:

Ցեղասպանությունների կանխարգելման, ժխտողականության դեմ պայքարի, և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության օրակարգին Հայաստանի ամուր հանձնառության կարևոր դրսևորում է հանդիսացել 2024թ. ապրիլի 16-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից կայացված որոշումը՝ **օգոստոսի 3-ը սահմանելու 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր**:

Խտրականության դեմ պայքարի և ներառականության քաղաքականության հետ կապված հարցերը առանցքային տեղ են զբաղեցնում ՀՀ միջազգային համագործակցության օրակարգում, մասնավորապես, կրթության, մշակույթի, լեզվի և ինքնության պահպանության ոլորտներում: Միջզգային համագործկցության կարևոր բաղադրիչներից են **նախադպրոցական կրթության կազմակերպման հետ կապված ջանքերը**, որոնք ուղված են կրթական գործընթացներում վաղ տարիքից երեխաների ներգրավմանն ու ներառականությանը: 2024թ-ին Հայաստանը սատարել

է ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում մի շարք երկրների կողմից նախաձեռնված գործընթացին, որն ուղղված է վաղ մանկության շրջանում կրթության, անվճար նախակրթական և միջնակարգ կրթության հարցերով նոր իրավական գործիքի՝ Երեխաների իրավունքների կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության մշակմանը՝ միանալով դրա շուրջ քննարկումներ սկսելու աշխատանքային խմբում ստեղծելու նախաձեռնությանը:

Ազգային փոքրամասնությունների, խտրականության բացառման և ներառականության քաղաքականության հետ կապված հարցերը առանցքային տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների ոլորտում **միջազգային մոնիտորինգային մարմինների հետ շարունակական համագործակցության** շրջանակներում, ներառյալ ՄԱԿ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CERD) շրջանակներում և ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI) հետ շարունակական համագործակցության միջոցով, ինչպես նաև ԵԽ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի, Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, ՄԱԿ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ICCPR), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (ICESCR), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (CRC), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի (CRPD), Համընդհանուր պարբերական դիտարկման (UPR) շրջանակներում:

✓ ***Հոդվածներ 3.1 և 3.2***

- Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք, և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որոնք կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնի անբարենպաստ պայմաններում:

-Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք (ինչպես անհատապես, այնպես նաև համայնքներով) կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն Շրջանակային կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորվում է ազգային փոքրամասնությունների ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին խորհրդարանում տեղեր հատկացնելու սկզբունքը: ԱԺ

պատգամավորների *չորս մանդատ* բաշխվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև՝ ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրին մեկ մանդատ սկզբունքով:

ՀՀ գործող օրենսդրությամբ չեն նախատեսվում ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց՝ այդպիսին համարվելու կամ չհամարվելու ընտրությունը սահմանափակող կարգավորումներ: Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց՝ այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության հնարավորությունը նախատեսված է Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի 21-րդ հոդվածով:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվում է ամրագրել ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց՝ այդպիսին համարվելու կամ չհամարվելու իրավունքը: Նույն հոդվածով նախատեսվում է նաև, որ այդ ընտրությունը, ինչպես նաև դրա հետ կապված իրավունքների իրականացումը չպետք է հանգեցնեն այդ անձի համար անբարենպաստ հետևանքների, ինչպես նաև սահմանվում է, որ ոչ ոք չի կարող հարկադրվել որոշելու կամ նշելու իր ազգային և էթնիկ ինքնությունը, պատկանելությունը որևէ ազգային փոքրամասնությանը, ինչպես նաև չի կարող հարկադրվել դրանցից հրաժարվելուն:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված մանրամասն տեղեկատվությունը ներկայացած է նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածում՝ 1-ից 14 կետերի ներքո:

Հոդվածներ 4.1, 4.2 և 4.3

- Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

-Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով Կողմերը, ըստ պատշաճի, պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

- Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն:

ՀՀ-ում ազգային փոքրամասնությունները ունեն ՀՀ օրենսդրությամբ ՀՀ-ի քաղաքացիների համար սահմանված հավասար սոցիալական աջակցության իրավունքներ: ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սահմանված է խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրական շրջանակ: Աշխատանքային օրենսգրքի 3.1-ին հոդվածով սահմանված են խտրականության արգելման վերաբերյալ կարգավորումները (այդ թվում՝ սահմանված է խտրականության հասկացությունը):

Աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից:
Աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել սեռը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, ամուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը:

Խտրականությունն արգելող օրենսդրական կարգավորումներ նախատեսված են նաև զբաղվածության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ:

2023թ-ից սկսած՝ **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդը**: 2023թ. նոյմեբերի 30-ին տեղի է ունեցել խորհրդի անդրանիկ նիստը, որին մասնակցել են ինչպես միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, Ազգային ժողովի՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող պատգամավորներ, այնպես էլ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների անդամներ: Նիստի շրջանակներում անդրադարձ է կատարվել հասարակական խորհրդի ստեղծման նպատակներին, ոլորտում առկա խնդիրներին, ազգային փոքրամասնությունների ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, մշակութային ժառանգության, ավանդույթների պահպանմանը նպաստող միջավայրի

կատարելագործման անհրաժեշտությանը, ինչպես նաև համապատասխան ոլորտային օրենսդրության ընդունմանն ուղղված աշխատանքներին:

Իրավահավասարության ապահովմանն ու խտրականության բացառմանն ուղղված միջոցառումները ներկայացված են նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածում՝ 6-րդ կետի ներքո:

✓ ***Հոդվածներ 5.1 և 5.2***

-Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

- Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողությունից, որը հետապնդում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ, և պետք է այդ անձանց պաշտպանեն ցանկացած գործողությունից, որը ուղղված է այդպիսի միաձուլման:

Նպատակ ունենալով ամրապնդել խտրականության դեմ պայքարի կառուցակարգերը և նախատեսել առավել արդյունավետ կարգավորումներ՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքների նախագծերի և հարակից օրենքների նախագծերի մշակումը, որոնք ևս կիրառելի կլինեն ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության դեպքերի նկատմամբ (տե՛ս նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածի 5-րդ և 6-րդ կետերը):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի «Մշակույթ» բաժնով **մշակույթը դիտարկվում է որպես հարթակ քաղաքացիների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար հանրային համախմբման, համերաշխության, համար և այն ներկայացնում որպես ներդաշնակություն ապահովող կարևոր գործիք:** Ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների, էթնիկ ինքնության պահպանման և մշակույթի լիարժեք դրսևորման նպատակով պայմաններ են ստեղծվում ազգային փոքրամասնությունների էթնիկ մշակույթի ներկայացման համար:

Շարունակական աշխատանքներ են տարվում ազգային փոքրամասնությունների **ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի գրանցման և ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության** պետական ցանկերում ներառման ուղղությամբ: Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն աջակցելու նպատակով ուսումնական ծրագրեր ստեղծելուց, դասագրքեր հրատարակելուց,

մանկավարժական կադրեր պատրաստելուց բացի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են հատկացվում էթնիկ համայնքների հասարակական կազմակերպություններին՝ նրանց կողմից հրատարակվող պարբերական մամուլի տպագրման գործընթացը խրախուսելու համար:
ՀՀ ԿԳՄՍՆ ֆինանսավորմամբ Երևանում և մարզերում ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների մասնակցությամբ ավանդաբար անցկացվում են գեղարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցահանդեսներ և երաժշտական փառատոններ: 2020-2022 թվականներին համապատասխանաբար կազմակերպվել է ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոն, ցուցահանդես, գեղանկարչության ուուցողական ծրագիր:
Ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրերին մասնակցելու և մշակութային հայտեր ներկայացնելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը իր պաշտոնական կայքէջում www.escs.am տեղադրում է դրամաշնորհների ներկայացման հայտարարություն, ինչը բաց է և հնարավորություն է տալիս բոլոր ազգային փոքրամասնություններին ներկայացնելու իրենց ծրագրերը:
(Տե՛ս նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածի 8-րդ կետը)

✓ ***Հոդվածներ 6.1 և 6.2***

- Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:

- Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

Հայաստանը հանձնառու է փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, համագործակցության, հանդուրժողականության ու միջմշակութային երկխոսության մթնոլորտի խթանմանը իր տարածքում բնակվող բոլոր անձանց համար՝ անկախ վերջիններիս էթնիկ, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունից:

Ադրբեջանի կողմից 2020թ. և 2023թ. սանձազերծված ռազմական լայնածավալ հարձակումների և հրահրված հումանիտար ճգնաժամային իրավիճակի արդյունքում Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչությունը ենթարկվեց էթնիկ զտումների՝ ստիպված լինելով լքել իրենց բնակավայրերը, որի հետևանքով շուրջ 115,000 մարդ դարձաց

փախստական: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության ներհոսքն ընդգծեց Հայաստանում պետական ծառայությունների ընդլայնման և բռնի տեղահանվածների համար դրանց հասանելիության ապահովման հրատապությունը: ՀՀ կողմից նախաձեռնվել են այս մարտահրավերներին արձագանքելուն ուղղված ջանքեր՝ տեղահանված անձանց անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով, հատկապես սոցիալական ապահովության, առողջապահության և կրթության ոլորտներում: Կառավարության կողմից միջոցներ են ձեռնարկվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների կրթության հասանելիությունը ապահովելու նպատակով, այդ թվում՝ սուբսիդավորելով կրթության վարձերի զգալի մասը և հոգալով լրացուցիչ ծախսերը:

2023 թվականին Կառավարությունն ընդունել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների բռնի տեղահանված ուսանողներին աջակցություն ցուցաբերելու որոշումը, որի շրջանակներում ուսման վարձի փոխհատուցում է տրվել մասնագիտական ուսումնական հաստատությունների 850 ուսանողներին ու բարձրագույն ուսումնական հաստատությունների 1837 ուսանողներին: Կառավարության մեկ այլ որոշմամբ ուսումը շարունակելու հնարավորություն է տրվել 34 միջին մասնագիտական ուսուցման (ՄԿՈՒ) և 1159 բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողի:

Լեռնային Ղարաբաղից ուսուցիչներին աշխատանքի տեղավորմանն աջակցելու նպատակով ԿԳՄՍ նախարարությունը գործարկել է https://kadrer.emis.am հարթակը, որն ուսուցիչների թափուր աշխատատեղեր է առաջարկում է հանրապետության տարբեր դպրոցներում: Այդ դպրոցներում աշխատանքի անցնող մասնագետների համար նախատեսվում է 30% հավելավճար, իսկ ահմանամերձ մի քանի համայնքների դեպքում նախատեսվում է 50 000 դրամ հավելավճար: Պետական հանրակրթական դպրոցներում ներկայումս ընդգրկված են ավելի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությունը ներկայացնող ավելի քան 500 ուսուցիչ, որոնցից 330-ը վերը նշված ծրագրի շրջանակներում աշխատանքի են տեղավորվել ՀՀ մարզային դպրոցներում: Բռնի տեղահանվածներին հոգեբանական աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվել են կրթական հաստատություններում հոգեբանական աջակցության ծառայությունների ծրագրեր, կրթական ոլորտի մասնագետների համար մի շարք վերապատրաստման դասընթացներ:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության ինքնությունն ու պատմամշակութային հարուստ ժառանգության պահպանմանն ու պաշտպանությանն ուղղված ծրագրերի շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ գործարկվել է ««Կծեգ» Արցախի բարբառների հանրահռչակում» նախաձեռնությունը: «Դիզակ ԱՐՏ» մշակութային հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող այս նախագիծը միտված է Լեռնային Ղարաբաղի բնակչության լեզվական և մշակութային հատկանիշների արտահայտման՝ թատերական բեմականացումների միջոցով՝ ներկայացնելով

Լեռնային Ղարաբաղից բնակիչների սովորույթները, մտածելակերպը, ասույթներն ու առած-ասացվածքները («Կծեգ» (կծիկ) խորհրդանշական վերնագիրն ընտրվել է՝ որպես տեղահանվածների մշակույթի հավաքական կերպար՝ բարբառների կծիկ, որը նաև միասնություն ու համախմբվածություն է խորհրդանշում:
ԿԳՄՍ նախարարության «Տերյան մշակութային կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ իրականացված «Կրթիր՝ կրթողին» ծրագրի շրջանակներում իրականացվել են թաղիքագործության, ասեղնագործության, կավագործության հմտությունների զարգացման և կատարելագործման դասընթացներ՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությունը ներկայացնող մասնագետների համար սեփական արտադրանք ստեղծելու, համագործակցային կապեր հաստատելու հնարավորությունները խթանելու նպատակով:
ԿԳՄՍ նախարարության «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգով 2023թ. դրամաշնորհային ծրագրի ներքո իկրականացվել է նաև «Կյանքը ափի մեջ» խեցեգործական և մանրանկարչական հմտությունների փոխանցում» դասընթացը, որն իրականացվել է «Գոյ» մարդասիրական հիմնադրամի նախաձեռնությամբ: Նախագծի նպատակն էր Կիլիկյան և Արցախ-Ուտիք մանրանկարչական դպրոցների շեշտադրմամբ ձևավորել մանրանկարված խեցե սպասքի և դեկորատիվ կիրառական առարկաների նոր դպրոց, բրենդավորել վերջինիս արտադրանքը, ապահովել Լեռնային Ղարաբաղից տեղահանված արվեստագետներին ստեղծագործական ինքնարտահայտման հարթակով և իրենց կարողությունների փոխանցման համապատասխան միջավայրով: Նախագծի ընթացքում դասավանդվել են ոչ նյութական մշակութային ժառանգության երկու ուղղություններ՝ խեցեգործություն և մանրանկարչություն: Մանրանկարչության 20 և խեցեգործության 7 եռամսյա դասընթացներին մասնակցել է 15 շահառու: Մանրանկարչության դասընթացին մասնակիցները սովորել են մանրանկարչական գծագրում, գունադրում, գունազարդում, ծանոթացել են զարդանախշերի և գծանախշերի պատմությանը, խորհրդին ու իմաստաբանությանը, ինչպես նաև տիրապետել են թղթի, կերամիկայի և մագաղաթի վրա նկարելու հմտություններին ու տեխնիկային:
Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումների քաղաքականության հետևանքով **վտանգվել է Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային, քրիստոնեական հարուստ ժառանգությունը**: Ըստ «Caucasus Heritage Watch» կազմակերպության կողմից իրականացվող արբանյակային հետազոտությունների՝ հրապարակված վերջին տվյալները ցույց են տալիս, որ մշակութային ժառանգության՝ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված ավերածությունները 2023 թվականի աշնանից ի վեր 75%-ով[1] աճել են:

[1] https://caucasusheritage.cornell.edu/?page_id=866

Հայաստանը շարունակաբար դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին Լեռնային Ղարաբաղ և հարակից տարածքներ փաստահավաք առաքելություն ուղարկելու խնդրանքով, սակայն ակնողմնակալ փաստահավաք առաքելություն իրականացնելու միջազգային կազմակերպությունների ջանքերը շարունակում են խոչընդոտվել Ադրբեջանի կողմից:

Հայատյացության և էթնիկ խտրականության քաղաքականության առնչությամբ 2021թ. **Հայաստանը հայց է ներկայացրել ընդդեմ Ադրբեջանի Արդարադատության միջազգային դատարանում՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի»** շրջանակներում՝ միաժամանակ ներկայացնելով նաև ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին միջնորդություն[2]: 2021 թվականի դեկտեմբեր**ին** Դատարանը բավարարեց Հայաստանի կողմից ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին միջնորդության պահանջների մեծ մասը՝ Ադրբեջանին պարտավորեցնելով՝

-Պաշտպանել Ադրբեջանում պահվող էթնիկ հայ անձանց բռնությունից և մարմնական վնասվածքներից,

-Կանխել էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն և խթանումը՝ այդ թվում պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,

-Կանխել և պատժել հայկական մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները,

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակման առնչությամբ 2023թ. փետրվարին Դատարանը պարտավորեցրեց Ադրբեջանին՝

-Մինչև Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի գործով վերջնական որոշման կայացումը ձեռնարկել բոլոր միջոցները երաշխավորելու Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը:

2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական հարձակումների և Լեռնային Ղարաբաղի բնակչության բռնի տեղահանման առնչությամբ **2023թ. նոյեմբերին** Դատարանը հրապարակեց ժամանակավոր միջոցներ կիրառելու հետևյալ որոշումները՝ Ադրբեջանին պարտադրելով.

-Ապահովել, որպեսզի այն անձինք, ովքեր լքել են Լեռնային Ղարաբաղը 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո, և ովքեր ցանկանում են վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, կարողանան դա անել անվտանգ, անարգել և արագորեն,

-Ապահովել, որպեսզի այն անձինք, ովքեր մնացել են Լեռնային Ղարաբաղում 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո, և ովքեր ցանկանում են հեռանալ, կարողանան դա անել անվտանգ, անարգել և արագորեն,

[2] https://www.icj-cij.org/case/180

-Ապահովել, որպեսզի այն անձինք, ովքեր մնացել են Լեռնային Ղարաբաղում 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո կամ վերադարձել են Լեռնային Ղարաբաղ, և ովքեր ցանկանում են մնալ, զերծ լինեն ուժի կիրառումից կամ ահաբեկումից, որը կարող է նրանց փախուստի պատճառ դառնալ,
-Պպաշտպանել և պահպանել գրանցամատյանները, անձը հաստատող և մասնավոր սեփականությանն առնչվող փաստաթղթերը և գրառումները, որոնք վերաբերում են առաջին կետում նշված անձանց և պատշաճ կերպով հաշվի առնել այդ փաստաթղթերը և գրառումները իր վարչական և օրենսդրական պրակտիկայում:

Ազգային մակարդակով ևս, Հայաստանը հետևողական քայլեր է ձեռնարկում **էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական հիմքով խտրականությունը կամ բռնությունը բացառելու** նպատակով: Նոր քրեական օրենսգրքով նախատեսվել են ատելության խոսքի և ատելության շարժառիթով կատարված հանցանքների (այդ թվում՝ ազգային, կրոնական, ռասայական, լեզվական պատկանելության հիմքով) դեմ պայքարի առավել համապարփակ և ընդգրկուն կարգավորումներ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսվում անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:
Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսվում անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:
Երկու արարքների համար էլ առավել ծանր պատիժ է նախատեսվում, եթե դրանք կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ:
ՀՀ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում նաև ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական թշնամանք հարուցելու նպատակով մշակութային արժեքներ, այդ թվում՝ կրոնական կամ

ծիսական նշանակության շենքեր կամ շինություններ ոչնչացնելու կամ վնասելու համար:
Ինչ վերաբերում է ատելության շարժառիթով կատարված հանցանքներին, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածով որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք է նախատեսվում հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը:
Քրեական օրենսգրքով մի շարք հանցագործությունների՝ բռնարարքների դեպքում (սպանություն (հոդված 155), առողջությանը ծանր, միջին և թեթև վնաս պատճառելը (հոդվածներ 166, 167 և 171), մարդուն առևանգելը (հոդված 191), ազատությունից ապօրինի զրկելը (հոդված 192), հոգեկան ներգործությունը (հոդված 194), ֆիզիկական ներգործությունը (հոդված 195), ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (հոդված 196), գույքը ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 264), դիակը և գերեզմանը անարգանքի ենթարկելը (հոդվածներ 305-306)) առավել ծանր պատիժ է նախատեսվում արարքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելու համար:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով ամրագրվում է ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության արգելքը, ինչպես նաև սահմանվում է, որ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում միջոցներ են ձեռնարկում՝ ուղղված՝

1) ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության դեպքերի կանխարգելմանը,

2) ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը,

3) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար կրթական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բնագավառներում իրավահավասարության ապահովմանը.

4) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հանրության իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև նրանց նկատմամբ անհանդուրժողականության բացառմանը:

«Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ամրագրել խտրականության սահմանումը, տեսակները, նախատեսել իրավահավասարության մարմնի կազմավորման և գործունեության հիմունքները:

Օրենքի նախագծին հարակից նախագծերով առաջարկվում է նաև լրացումներ կատարել վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում՝ նախատեսելով խտրականության գործերի քննության հատուկ վարույթներ՝ ապացուցման բեռի բաշխման կանոնի առանձնահատկություններով՝ միջազգային ստանդարտներին համահունչ (տե՛ս նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածի 5-րդ և 6-րդ կետերը):

✓ ***Հոդված 7***
- Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

ՀՀ-ում պետական գրանցում են ստացել թվով 79 կրոնական կազմակերպություն, որոնցից 12-ը պատկանում են ազգային փոքրամասնություններին (որոնցից եզդիական՝ 4, ասորական՝ 1, հրեական՝ 1, ռուս-մալականների՝ 1, ռուսական ուղղափառ եկեղեցու՝ 5):
Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական ռեգիստրում գրանցվել են ազգային փոքրամասնության պատկանող հետևյալ նոր կրոնական կազմակերպությունները.
13.04.2021թ. - «Հայաստանի եզդիական կրոնամշակութային կենտրոն» կրոնական համայնքը,
26.04.2022թ. - «Դինե Շարֆադին» (եզդիներ),
23.03.2023թ. – Ռուս Ուղղափառ եկեղեցու Երևանի և Հայաստանի թեմը:

Հավաքների, մտքի, խղճի և կրոնի, ինչպես նաև միավորումների ազատությունները ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ՝ որպես մարդու հիմնարար իրավունքներ և ազատություններ: Այսպես, 41-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը: Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք, իսկ 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի թույլատրվում հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածով ամրագրվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ պահպանելու և զարգացնելու իրենց ավանդույթները, կրոնը, լեզուն և մշակույթը:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով նախատեսվել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց խղճի, մտքի և կրոնի, ինչպես նաև միավորումների ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելուն ուղղված դրույթներ: Օրենքի նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը և սահմանվում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կրոնի ազատության իրավունքի իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

Խղճի և կրոնական դավանանքի ազատության և կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության վերաբերյալ իրավակարգավորումները սահմանվում են «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով, որով թեև չեն նախատեսվում ազգային փոքրամասնություններին վերաբերելի հատուկ կարգավորումներ, սակայն այն հավասարապես վերաբերելի է յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և նրանց կողմից ստեղված կրոնական կազմակերպությունների նկատմամբ:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիները օրենքի առջև հավասար են քաղաքացիական, քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն նշել իրենց ազգային և կրոնական տոները և պատմական տարեթվերը, մասնակցել իրենց ազգային ծիսակատարություններին, օգտագործել իրենց ազգային խորհրդանիշերը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Ըստ այդմ, նախատեսվում է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց ազգային և կրոնական տոները կամ պատմական տարեթվերը տոնելու օրերին առավելագույնը տարեկան երեք օր չվճարվող արձակուրդի իրավունքը:

«Լեզվի մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

Նույնական կարգավորում է առաջարկվում նախատեսել նաև «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածով: Նույն հոդվածով սահմանվում է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ ստեղծելու ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց

կանոնադրական նպատակը ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքները պաշտպանելն ու իրականացնելն է:
Օրենքի նախագծի 16-րդ հոդվածով նախատեսվում է նաև, որ ՀՀ պետական բյուջեից յուրաքանչյուր տարի ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ծրագրերին տրամադրվում է ֆինանսական աջակցություն: Հարկ է նկատել, որ նշված աջակցությունը ներկայումս ևս տրամադրվում է՝ ներառվելով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքում՝ որպես ՀՀ վարչապետի աշխատակազմի բյուջեի մաս:

✓ ***Հոդված 8***
-Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ, ընկերություններ ստեղծելու իրավունքը:

ՀՀ սահմանադրության 41-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր անձի, այդ թվում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին, օգտվելու սահմանադրորեն երաշխավորված մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքից: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք, ինչպես միայնակ, այնպես էլ՝ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:
ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության մշակութային կազմակերպություններում աշխատում են 22 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ:
Յուրաքանչյուր տարի ապրիլի 13-ին հաջորդող չորեքշաբթի օրը «Եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպման» ծրագրով եզդիական համայնքի մասնակցությամբ իրականացվում են եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումներ, երբ եզդիական համայնքը նշում է «Մալակե թաուսի» տոնը («Զարշամա սարե սալե»), որը եզդիների Նոր տարին է և եզրափակվում է եզդիական ավանդական «Զլե հավինե» տոնի իրականացմամբ.
Հունիսի 14-ին ասորական համայնքը նշում է «Մարեզ»-ը՝ որպես ասորիների կրոնական տոն, իսկ հուլիսի 3-ը նշվում է որպես ասորական եկեղեցու օր: Յուրաքանչյուր տարի ապրիլի 1-ին ասորիները նշում են Նոր տարին («Խա բը-Նիսան»), որը բնության կենսական ուժերը կյանքի կոչող, զարթոնքի, նաև՝ սիրո, ուրախության, պտղաբերության տոն է: Տոնակատարությունն ընդգրկված է ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում:
2022 թվականի օգոստոսի 18-ին Արզնի գյուղում ավարտվել է ասորական Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցու վերակառուցումը, տեղադրվել է խաչը: Եկեղեցին

կառուցվել է 1881թ.-ին: Այն հաշվառված է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում և պահպանվում է պետության կողմից:

Հայաստանի Հանրապետությունում գործում է ասորական 3 եկեղեցի:

Մշակութային պետական քաղաքականության իրականացման շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ ՏԿԵՆ-ի հետ համատեղ պարբերաբար կազմակերպում է ՀՀ մարզերից ու համայնքներից ստացված մշակույթի տների և ակումբների վերանորոգման և շինարարության կապիտալ ծախսերի վերաբերյալ միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի քննարկումներ: Քննարկումների արդյունքում պարբերաբար վերանորոգվում կամ կառուցվում են մշակույթի տներ՝ տարբեր համայնքներում, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների բնակավայրերում:

2022թ. կազմվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ռուսական Ամրոց «Ալեքսանդրապոլ» («ՄԵԾ») հուշարձանի պահպանական գոտիների նախագիծը, որը փորձագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա ուղարկվել է համայնքի ղեկավարի համաձայնեցմանը:
2022թ. Գյումրի քաղաքի ռուսական Զորակայան «Կաբարդինսկի» հուշարձանի տարածքում առկա 3 կառույցներին (N 11 շենք (զորանոց), N 13 շենք (զորանոց), N 1, 2, 3 (ակումբ, սանմաս)) տրվել է ենթահուշարձանի կարգավիճակ:
2023թ. կազմվել է Զորակայան «Կաբարդինսկի» հուշարձանի պահպանական գոտիների նախագիծը:
2020-2023 թթ. շարունակվել է ազգային փոքրամասնություններին պատկանող հուշարձանների տարածքներում եռալեզու ցուցանակների տեղադրման գործնթացը:
ՀՀ-ում պետական գրանցում են ստացել թվով 79 կրոնական կազմակերպություն, որոնցից 12-ը պատկանում են ազգային փոքրամասնություններին (եզդիական՝ 4, ասորական՝ 1, հրեական՝ 1, ռուս-մալականների՝ 1, ռուսական ուղղափառ եկեղեցու՝ 5):
Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական ռեգիստրում գրանցվել են ազգային փոքրամասնության պատկանող հետևյալ նոր կրոնական կազմակերպությունները.
13.04.21թ. - «Հայաստանի եզդիական կրոնամշակութային կենտրոն» կրոնական համայնքը,
26.04.22թ. - «Դինե Շարֆադին» (Էզդիներ)»-ը,
23.03.23թ. – Ռուս Ուղղափառ եկեղեցու Երևանի և Հայաստանի թեմը:

Պետական պաշտպանության ներքո է առնված ՀՀ տարածքի բոլոր պատմաճարտարապետական, մշակութային և կրոնական կառույցները՝ անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող և պատմական հուշարձաններից բացի Հայաստանի տարբեր մարզերում հաշվառված և պահպանվում են հուշարձաններ, որոնց մեծամասնությունը գերեզմանոցներ են: ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին համայնքն ունի գործող

եկեղեցի, մատուռ: Համայնքում գործում է «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն: Համայնքի բնակչության 80 տոկոսն ասորիներ են:

✓ ***Հոդվածներ 9.1, 9.2, 9.3 և 9.4***

- Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջամտությունից և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում Կողմերը պետք է ապահովեն, որ լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չենթարկվեն խտրականության:

- Առաջին կետը չի արգելում, որ Կողմերը ռադիոյի և հեռուստահեռարձակման կամ կինեմատոգրաֆիայի ձեռնարկությունների համար արտոնագրում պահանջեն՝ առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

- Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները՝ Կողմերը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորություն:

- Իրենց իրավական համակարգերի շրջանակներում Կողմերը պետք է համապատասխան (համարժեք) միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուրժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու համար:

2020 թվականի հուլիսի 16-ին ընդունվել և օգոստոսի 7-ին ուժի մեջ է մտել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) և Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000թ. հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքն ուժը կորցրած է ճանաչվել:

Եթե «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը սահմանում էր, որ հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը և Հանձնաժողովն էլ համաձայն 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 50-

ն որոշմամբ սահմանել էր այդ ժամաքանակները, ապա «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը սահմանում է նոր իրավական կարգավորումներ: Միաժամանակ, Օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ե» ենթակետը սահմանում է, որ հանրային հեռարձակողները պարտավոր են մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ հեռարձակելու նպատակով ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար շաբաթական նվազագույնը 30 րոպե Հանրային տեսալսողական հեռարձակողների և 2 ժամ Հանրային լսողական հեռարձակողի եթերով տրամադրել եթերային ժամանակ:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է խտրական խոսքի արգելքը տեսալսողական մեդիայում: «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն, կամ որոնք պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն: Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է նաև, որ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-06:00: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվել են Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 24-ի թիվ 73-Ն որոշմամբ, համաձայն որի՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն տեսալսողական հաղորդումները, որոնք, ի թիվս այլնի, վարկաբեկում և նսեմացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը, նսեմացնում և վարկաբեկում են Հայաստանում գրանցված և գործող կրոնական կազմակերպություններին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար:

Հանրային հեռարձակողները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարբերաբար տեսալսողական հաղորդումներ են հեռարձակում Հայաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կամ նախաձեռնությամբ ազգային փոքրամասնությունների մասին վերլուծական, իրավունքների իրազեկման կամ տեղեկատվական հաղորդումներ՝ հիմնականում

հայերեն կամ ռուսերեն: Հեռուստալրագրողների խնդրանքով ազգային փոքրամասնությունների միջոցառումները կամ տոնակատարությունները մեկնաբանելիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները խոսում են իրենց լեզվով: Հանրապետության մարզերում գործող տեսալսողական մեդիածառայություն մատուցողները հաճախ ցուցադրում են տարբեր հաղորդաշարեր, պարբերաբար անդրադառնում են ազգային փոքրամասնությունների կողմից ներկայացվող խնդիրներին: Հայաստանի Հանրապետությունում չկան զանգվածային լրատվական միջոցներ, որոնք կտարածեին բացասական կարծրատիպեր էթնիկական փոքրամասնությունների մասին: Հեռարձակողների կողմից պահպանվում են Օրենքի վերը նշված դրույթի պահանջները, և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս խախտումներ չեն հայտնաբերվել: Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզիան միակ հիմքն է, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում Հեռարձակողին տեսալսողական տեղեկատվության հեռարձակում իրականացնելու համար օգտագործել հանրային մուլտիպլեքսի սլոթ:

Հանրային հեռուստաընկերության եթերում 2020-2024թթ. ընթացքում էթնիկ բազմազանության և ազգային փոքրամասնությունների մշակույթի մասին եղել են հետևյալ հաղորդաշարերը՝ “Կողք կողքի“, “Ազգային համեր“, “Էթնոգույներ“ /2 եթերաշրջան/, Լուրեր եզդիերեն: Բացի այդ, “Առավոտ լուսո“ հաղորդման ընթացքում՝ տարբեր ձևաչափերով, պարբերաբար անդրադարձ է կատարվում ազգային փոքրամասնությունների մշակույթին:

Հայաստանի հանրային ռադիոյի կողմից յուրաքանչյուր օր հաղորդումներ են ներկայացվում եզդիերեն, քրդերեն, ասորեն և հունարեն լեզուներով, որոնք հեռարձակվում են հետևյալ տևողություններով՝ AM 69.7 հաճախականությամբ՝ եզդիերեն 60րոպե, քրդերեն՝ 30 րոպե, ասորեն՝ 15 րոպե, հունարեն՝ 15 րոպե, AM 1395 հաճախականությամբ՝ եզդիերեն 15 րոպե, քրդերեն 30 րոպե: Հաղորդումները հեռարձակվում ենինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ Հայաստանից դուրս և միտված են Էթնիկ բազմազանության և ազգային փոքրամասնությունների մշակույթի տեղեկացվածության բարձրացմանը՝ ապահովելով վերոնշյալ ազգային փոքրամասնությունների՝ սեփական լեզվով տեղեկացվածությունը Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին:

Բացի յուրաքանչյուր լեզվով տրվող ամենօրյա լրատվությունից, հանրային ռադիոյի եթերում հնչող փոքրամասնությունների հաղորդումներում մաս է հատկացվում նաև յուրաքանչյուրի մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի, լեզվի մասին տեղեկատվության հաղորդման ներառմանը:

Հանրային ռադիոյում յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն ունի նաև իր լեզվով հրապարակվող պաշտոնական կայքէջ, որտեղ հրապարակվում է հայերենից

թարգմանված օրվա լրատվությունը, ներկայացվում են ռեպորտաժներ, տեսանյութեր, հարցազրույցներ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ականավոր գործիչների հետ: Բացի այդ, գործում է նաև ֆեյսբուքյան էջ, որտեղ տեղադրվում են ռադիոյի՝ համապատասխան լեզվով գործող կայքից հրապարակները՝ առավել նպաստավոր դարձնելով այդ լեզվով տեղեկատվության տարածումը:

Վերոնշյալ խմբագրություններում վերապատրաստման հնարավորություն է տրվում փոքրամասնություններին պատկանող երիտասարդ կադրերին՝ նրանց հնարավորություն ընձեռելով բերել աշխատանքային փորձ և հմտություն:

2023թ. սկսած՝ Հանրային ռադիոյի ազգային փոքրամանսնությունները ներկայացնող խմբագրություններում կատարվել են նաև հետևյալ բարեփոխումները.

- Եզդիերեն բաժինը շաբաթվա մեջ մի քանի անգամ հրապարակել է ամենօրյա տեսանորություններ,
- ժամային նոր գրաֆիկի, այն է՝ 08:00-09:00-ից մինչև 21:00-22:00,
- Ընդլայվել է շաբաթ և կիարակի օրերին եզդիերեն հեռարձակող գրական և մշակութային հաղորդումների բովանդակությունը՝ ընդգծելով ազգային ինքնության պահպանման կարևորությունը,
- Ասորեն բաժնի ՀՀ Հանրային ռադիոընկերության աշատակցի աջակցությամբ 2023թ-ին ասորական համայնքի պարային, երաժշտական խմբերը և եկեղեցական երգչախումբը ազգային մշակույթը պահպանելու և նոր սերնդին փոխանցելու նպատակով ռադիոյում կատարել են ձայանագրություններ, որոնք պահպանվում են ռադիոյի արխիվում, ինչպես նաև՝ օգտագործվում են վերոնշյալ բաժնի մշակութային հաղորդումների ժամանակ:

Ազգային փոքրամասնությունների լեզվա-մշակութային ինքնության պաշտպանությանն ուղղված գործողությունները ներկայացված են նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածում՝ 2-րդ, 8-րդ և 9-րդ կետերի ներքո:

✓ ***Հոդվածներ 10.1, 10.2 և 10.3***

-Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ անձնական կյանքում, հասարակական վայրերում իր փոքրամասնության լեզվից բանավոր և գրավոր անարգել օգտվելու իրավունք ունի:

- Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական

իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:
- Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ ամենասեղմ ժամկետներում իրեն հասկանալի լեզվով տեղեկություն ստանալ իր ձերբակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով՝ դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով թարգմանչի անվճար ծառայություն:

Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ անձնական կյանքում, հասարակական վայրերում իր փոքրամասնության լեզվից բանավոր և գրավոր անարգել օգտվելու իրավունք ունի: Այս իրավունքի իրականացումը կարգավորվում է «Լեզվի մասին» օրենքով և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով: «Լեզվի մասին» օրենքում 2018 թվականի մարտի 23-ին կատարած լրացման արդյունքում Լեզվի կոմիտեն ապահովում է ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը: «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»:

Նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ: Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզուներին տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով: Այդ դեպքում վարչական մարմինը կարող է պահանջել ներկայացնել փաստաթղթերի թարգմանությունները հայերենով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլատրվում է վարույթի մասնակիցների կողմից օտար լեզուների օգտագործումը, սակայն այդ անձինք պարտավոր են իրենց ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել

հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի:
Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական ակտն ընդունած վարչական մարմինը, գրավոր վարչական ակտի հասցեատիրոջ խնդրանքով, նրան կարող է տրամադրել նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով: Նույն հոդվածի 6-րդ հոդվածի համաձայն՝ բանավոր վարչական ակտը կարող է հրապարակվել դրա հասցեատիրոջ համար հասկանալի որևէ օտար լեզվով:

«Նոտարիատի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզվով որակավորման վկայական ունեցող թարգմանչի բացակայության դեպքում նոտարական գործողության կատարմանը որպես թարգմանիչ մասնակցում է տվյալ ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանության նպատակով ձևավորված հասարակական կազմակերպության ղեկավարի կողմից երաշխավորված անձը, իսկ այդպիսի հասարակական կազմակերպության բացակայության դեպքում՝ ազգային փոքրամասնության բնակության վայրի համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի կողմից երաշխավորված անձը:

Յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց՝ պետական մարմինների հետ հաղորդակցությունում իրենց լեզուն օգտագործելու վերաբերյալ կարգավորումներ են նախատեսվում ՀՀ քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության վերաբերյալ օրենսգրքերով:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ վարույթի լեզուն գրական հայերենն է, սակայն բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Նույն հոդվածի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է, իսկ վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:
Քրեական դատավարության 350-րդ հոդվածի համաձայն՝ եթե վարույթի մասնավոր մասնակիցը չի տիրապետում վարույթի լեզվին, ապա դատավճիռը հրապարակելիս թարգմանիչը տվյալ անձի համար թարգմանում է դրա եզրափակիչ մասը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Նույն հոդվածի

համաձայն՝ գործին մասնակցող անձին, նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, և գործին մասնակցող անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կողմը, նրա ներկայացուցիչը, կողմի նախաձեռնությամբ նշանակված փորձագետը կամ կողմի միջնորդությամբ հրավիրված վկան իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե կողմն ապահովում է հայերեն թարգմանությունը: Նույն հոդվածի համաձայն՝ վարչական դատավարության մասնակցին, նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չունի հայերեն հաղորդակցվելու հնարավորություն, և նա ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով չեն նախատեսվում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվող բողոքի լեզվի կամ Պաշտպանի հետ հաղորդակցության լեզվի պահանջներ: Գործնականում Պաշտպանի աշխատակազմը հնարավորինս ապահովում է Պաշտպանին դիմող անձանց հետ հաղորդակցությունը ոչ միայն հայերենով, այլ նաև նրանց նախընտրելի այլ լեզուներով՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով թարգմանչի մասնակցությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածով նախատեսվում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի լիազորությունը՝ ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց, համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ առանձնազրույցի շրջանակներում անհրաժեշտության դեպքում ներգրավելու թարգմանիչ:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածով առաջարկվում է նախատեսել, որ այն համայնքներում, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կազմում են բնակչության առնվազն քսան տոկոսը, որպես տեղական ինքնակառավարման մարմինների հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու լեզու կարող է օգտագործվել նաև ազգային փոքրամասնության լեզուն:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետին, ապա հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով սահմանվում է անձնական

ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի իրավունքը՝ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածով նախատեսվում է մեղադրյալի իրավունքը՝ իրեն ձերբակալելուց կամ մեղադրանք ներկայացնելուց հետո անհապաղ անվճար ստանալու իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում, ինչպես նաև իր համար հասկանալի լեզվով, անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացվող մեղադրանքի փաստական պայմանների և իրավական գնահատականի մասին, իսկ արգելանքի վերցվելու դեպքում՝ նաև իրեն ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի 57-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել վարչական ձերբակալման կիրառման դեպքում ձերբակալված անձի իրավունքը՝ իրեն հասկանալի լեզվով իմանալ իրեն ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների մասին, առարկություններ ներկայացնել դրանց վերաբերյալ: Օրենսգրքի նախագծի 58-րդ հոդվածով ձերբակալում իրականացնող պաշտոնատար անձի համար որպես պարտականություն նախատեսվում է թարգմանչի ներկայությունը ապահովելը, եթե ձերբակալվածը չի տիրապետում հայերենին:

Օրենսգրքի նախագծի 66-րդ հոդվածով սահմանվում է վարչական իրավախախտման կատարման մեջ կասկածվող անձի իրավունքը՝ իրեն հասկանալի լեզվով տեղեկանալ իրեն վերագրվող վարչական իրավախախտման մասին, վերագրվող արարքի փաստական հանգամանքներին և իրավաբանական որակմանը, իսկ անձին ազատությունից փաստացի զրկելու պահից՝ ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների մասին, անհապաղ ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում, ինչպես նաև անվճար օգտվել թարգմանչի ծառայություններից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծը 2023 թվականի երկրորդ կիսամյակում ներկայացվել է հանրային քննարկման և այժմ հավաքագրված առաջարկությունների և դիտարկումների շրջանակում շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կազմակերպվում են քննարկումներ և դրանում կատարվում են լրամշակումներ: Որպես օրենսգրքի նախագծի ընդունման ժամկետ նախատեսվում է 2025 թվականը:

- ***Հոդվածներ 11.1, 11.2 և 11.3***
  - Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական

ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:
- Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ իր փոքրամասնության լեզվով հասարակության համար տեսանելի մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:
- Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

Երեխայի անվան, հայրանվան և ազգանվան գրանցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքով: Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ծննդյան ակտային գրացման մեջ երեխայի անունը գրառվում է ըստ դիմումում նշված անվան, երեխայի հայրանունը գրառվում է ըստ ծննդյան ակտային գրանցման մեջ երեխայի հայր գրառված անձի անվանման, երեխայի ազգանունը գրառվում է նրա ծնողների ազգանվամբ, իսկ ծնողների տարբեր ազգանունների դեպքում՝ ըստ դիմումում նշված ազգանվան: Քաղաքացիական կացության ակտային գրանցումը, ներառյալ՝ ծննդյան ակտային գրանցումը կատարվում են հայերենով, միաժամանակ, «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքով չեն սահմանվում անձի անվան կամ ազգանվան բնույթի հետ կապված որևէ սահմանափակումներ, ըստ այդմ՝ դիմում ներկայացնող անձը (երեխայի ծնողը) կարող է ազատորեն ընտրել երեխայի անունը՝ այդ թվում ընտրելով ազգային փոքրամասնության լեզվով կիրառելի անուն:

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքի 10-րդ գլխով նախատեսվում է նաև անվան փոխման պետական գրանցման հնարավորությունը՝ առանց անվան բնույթի հետ կապված որևէ սահմանափակման: Մասնավորապես, օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ տասնութ տարին լրացած անձն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը և ազգանունը: Նույն հոդվածի համաձայն՝ տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձն իր անվան և ազգանվան փոխման պետական գրանցումը կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ, բացառությամբ նրա՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչվելու

դեպքերի: Տասնվեց տարին չլրացած անձի անվան կամ ազգանվան փոխման պետական գրանցումը կատարվում է ծնողների համատեղ դիմումի հիման վրա, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ:

ՀՀ Կոտայքի մարզի Զովունի, Նոր Գեղի, Արզնի, Քանաքեռավան բնակավայրերի մուտքերի մոտ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղադրված են տեղագրական ցուցանակներ:

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի պետական հաստատություններում առկա են եռալեզու վահանակներ: Տաշիր, Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում տեղադրված են ռուսերեն լեզվով ցուցանակներ:

Մարզի Կողես և Յաղդան համայնքներում բնակվող հույները, որոնք ամուսնացել են հայերի հետ բավարար տիրապետում են հայերենին: Համայնքի ղեկավարին առաջարկվել է տեղադրել նաև հունարեն ցուցանակներ, սակայն վերջինս, հաշվի առնելով վերոգրյալը, դրա անհրաժեշտությունը չի տեսնում:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ի մասի 23-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանումների վերաբերյալ:

Հայաստանի կառավարության աջակցությամբ առաջիկայում բացվելու է եզդի Ամոյան եղբայրների մենապայքարային մարզաձևերի մարզադպրոցը:

Երկլեզու ցուցանակներ տեղադրված են հետևյալ մարզերի բնակավայրերում.

Արարատի մարզի Վերին Դվին համայնքի մուտքի մոտ փակցված է ցուցանակ՝ հայերեն, անգլերեն և ասորերեն լեզուներով: Համայնքապետարանի շենքի վրա ևս առկա է պաստառ հայերեն և ասորերեն լեզուներով: Համայնքի եկեղեցու վրա նույնպես տեղադրված է պաստառ ասորերեն լեզվով:

Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Միրզա Սլոյանի անունով նախակրթարանի շենքին կա ցուցանակ հայերեն և եզդիերեն:

Համայնքի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անունով դպրոցի վրա առկա են ցուցանակներ և՛ հայերեն և՛ եզդիերեն:

Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի դպրոցում փակցված են հայերեն և ռուսերեն լեզուներով ցուցանակներ:

Համայնքի բոլոր հանգստի սրահներում, խանութներում, բոլոր ենթակառուցվածքների վրա առկա են հայերեն և ռուսերեն ցուցանակներ:

Լերմոնտովո համայնքում՝ դպրոցի շենքի վրա առկա է հայերեն և ռուսերեն ցուցանակ: Համայնքապետարանի շենքի մուտքի մոտ փակցված է հայերեն և ռուսերեն ցուցանակ: Համայնքի մուտքի մոտ ևս առկա է համայնքի անվանումը կրող ցուցանակ՝ հայերեն և ռուսերեն:

Հայաստանի աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխության իրավական հիմքերը և պատմական և մշակութային ժառանգության աշխարհագրական անվանումների գրանցումն ու պաշտպանությունը կարգավորվում են «Աշխարհագրական անվանումների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև Հայաստանի մշակութային ոլորտը կարգավորող բազմաթիվ օրենսդրական փաստաթղթերով: **Աշխարհագրական օբյեկտների անվանումների ստանդարտացման գործընթացներում մշտապես հաշվի է առնվում Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ավանդույթների և պատմամշակութային ժառանգության պաշտպանության կարևորությունը:**

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով նախատեսվում է, որ հնարավորություն կընձեռնվի այն համայնքներում, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կազմում են ընդհանուր բնակչության առնվազն երեսուն տոկոսը, համայնքների և փողոցների անվանումները, ինչպես նաև պետական և համայնքային հաստատությունների՝ այդ թվում համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի ցուցատախտակների գրառումները հայերենի հետ զուգահեռ նշվեն նաև ազգային փոքրամասնության լեզվով:

- ✓ ***Հոդվածներ 12.1, 12.2 և 12.3***

- Կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:

-Այս ենթատեքստում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

- Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության տակ առնված լեզուները կրող ազգային փոքրամասնությունների համայնքներին տարրական կրթությունը հասանելի է էթնիկ լեզուներով: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի Հայաստանի Հանրապետությունում պետական ուսումնական հաստատություններում կրթությունը /հանրակրթության բոլոր մակարդակներում/ պարտադիր է և անվճար ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Բացի այդ, խառը բնակության վայրերում, որտեղ ազգային փոքրամասնությունների թիվը փոքր է, նախատեսված է նաև լեզվի ֆակուլտատիվ ուսուցման հնարավորություն:

Ազգային փոքրամասնությանը պատկանող քաղաքացու երեխաների ընդունելությունը դպրոց կատարվում է երեխայի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների (սովորողների) ծնողները:

Մշակված է Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանը՝ համաձայն որի պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում ընդգրկված ազգային փոքրամասնությունների «Մայրենի լեզու և գրականություն» առարկայի ուսուցման համար ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվին և գրականությանը, 1-12-րդ դասարաններում շաբաթական՝ տարրական դպրոցում հատկացված է 4 դասաժամ, իսկ հիմնական և ավագ դպրոցներում 3-ական դասաժամ՝ նրանց համար գործող ուսումնական ծրագրերին համապատասխան: Բացի այդ, խառը բնակության վայրերում, որտեղ ազգային փոքրամասնությունների թիվը փոքր է, նախատեսված է նաև լեզվի Խմբակի ձևով ուսուցման հնարավորություն:

Համաձայն ՀՀ կառավարության 2023թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» 216-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզուների խմբակավարի պաշտոնը կարող է զբաղեցնել առնվազն միջին մասնագիտական կրթություն ունեցող և տվյալ լեզվին տիրապետող անձը, մինչդեռ այդ պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչները, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, պետական ուսումնական հաստատության միջոցների հաշվին նախապես անցնում են վերապատրաստում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի

մասնագիտական չափանիշներով սահմանված մասնագիտական զարգացման պահանջներին համապատասխան:

2022 թ. նոյեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովը ընդունել է «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171800): Ծրագրով, մասնավորապես, սահմանված է.

- Ազգային փոքրամասնությունների համար որակյալ կրթության հասանելիության ապահովում, այդ թվում՝ բարձրագույն կրթության մակարդակում, ուսուցիչների պատրաստման, ուսուցիչների շարունակական վերապատրաստման և որակավորման բարձրացման, ազգային փոքրամասնությունների լեզուներով ուսուցիչների խրախուսման տարբեր եղանակների ներդրման, ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում նախադպրոցական կրթության շարունակական ընդլայնման և այլ միջոցներով (81-րդ կետի 5) ժա. ենթակետ):

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել, որ՝

- Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթությունը ազգային փոքրամասնությանը պատկանող երեխաների համար կարող է կազմակերպվել նրանց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ, կամ ազգային փոքրամասնությանը պատկանող երեխաների համար կարող են կազմակերպվել նրանց մայրենի լեզուն, մշակույթը և պատմությունը ուսուցանող լրացուցիչ կրթադաստիարակչական խմբեր՝ կրթության բնագավառում Կառավարության լիազորած մարմնի հաստատած կարգի համապատասխան և հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների մշտական բնակության վայրի ընդգրկվածությունը,

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար կարող են գործել ոչ պետական հանրակրթական հաստատություններ, որտեղ ուսուցումն իրականացվում է նրանց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ՝ կրթության բնագավառում Կառավարության լիազորած մարմնի հաստատած ծրագրի համաձայն,

- Հայաստանի Հանրապետությունը պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է ազգային փոքրամասնությունների կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական գրականության մշակմանը, մանկավարժական կադրերի պատրաստմանը, ինչպես նաև կրթական ծրագրերում ՀՀ տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկատվության ներառմանը՝ համագործակցելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ,

- Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է հատկացնում ազգային պետություն չունեցող ազգային փոքրամասնությունների լեզուն և մշակույթը ուսուցանող առարկայական ծրագրերի մշակման, դասագրքերի և այլ նյութերի հրատարակության համար:

✓ ***Հոդվածներ 13.1 և 13.2***

- Իրենց կրթական համակարգերի շրջանակներում Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծելու և ղեկավարելու իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները:

- Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություն չի դնում:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2012 թվականի մայիսի 18-ի թիվ 496-ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» 05 մարտի 2021 թ. N 24-Ն հրամանի՝ ՀՀ քաղաքացիները՝ այդ թվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, իրավունք ունեն ստեղծել վերապատրաստման կազմակերպություններ և ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորմանը, ինչ վերաբերում է ֆինանսական պարտավորություններ առաջացնելուն՝ վերոնշյալ հրամանով հաստատված վերապատրաստող կազմակերպությունները վարձատրվում են սահմանված կարգով՝ կախված վերապատրաստվող ուսուցիչների քանակից:

✓ ***Հոդվածներ 14.1, 14.2 և 14.3***

-Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն:

- Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ:

- Սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները չպետք է իրագործվեն ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցման և դասավանդման:

Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության ռազմավարությունը կառուցվում է օտար լեզուների՝ որպես Հայաստանի Հանրապետության

լեզվամշակույթի անբաժան մասնիկը և նրա մշակույթային հարստությունը լինելու սկզբունքով Ազգային փոքրամասնությունների լեզուների նկատմամբ պետական հոգածությունը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման հետագա ընթացքի և քաղաքացիական հասարակության զարգացման համար ունի կարևոր նշանակություն: Ազգային փոքրամասնությունների լեզուները Հայաստանում գտնվում են պետության պաշտպանության ներքո և ունեն հատուկ ճանաչում: ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածով ամրագրված է ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքը: Երկրի լեզվաքաղաքականության սկզբունքներից են՝ լեզվական և մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքը, ազգային փոքրամասնությունների լեզվի և մշակույթի զարգացման խրախուսումը: Լեզվաքաղաքականության ռազմավարության շրջանակներում կազմակերպվող միջոցառումներն ուղղված են ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը, նրանց միջև արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը:

Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն աջակցելու նպատակով ուսումնական ծրագրերից, դասագրքերի հրատարակումից, մանկավարժական կադրեր պատրաստելուց բացի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են հատկացվում նաև էթնիկ համայնքների հասարակական կազմակերպություններին՝ նրանց կողմից հրատարակվող պարբերական մամուլի տպագրման գործընթացը խրախուսելու համար: Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունը աջակցություն է ցուցաբերում ACFC/SR/V(2020)002 39 ազգային 11 փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող 11 մամուլի հրատարակմանը (տես Հավելված 3):

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N136-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթության նոր պետական չափորոշիչը, որով սահմանվել են հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքները: Այդ վերջնարդյունքների մեջ թվարկվում է նաև ազգային փոքրամասնությունների սովորողների համար՝ իրենց ազգային լեզվով հաղորդակցվելու, գրելու և կարդալու, իրենց մշակույթը ճանաչելու ու այն ներկայացնել կարողանալու պահանջները:

5-րդ դասարանում «Իմ հայրենիք» առարկան ևս նպաստում է ազգային փոքրամասնությունների պատմության, լեզվի, մշակույթի ուսումնասիրմանը: ՀՀ ԿԳՄՍՆ ԿԶՆԱԿ հիմնադրամը նախաձեռնել է ՀՀ ազգային փոքրամասնությունների ավանդույթների և տոների լուսաբանմանը նվիրված միջոցառումների շարք, որն իրականացվելու է ազգային փոքրամասնությունները ներկայացնող համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով ամեն տարի վերահրատարակվում են եզդիերենի և քրդերենի դասագրքեր, որոնք անվճար տրամադրվում են աշակերտներին:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հրատարակված դասագրքերի և առարկայական ծրագրերի էլեկտրոնային տարբերակները հասանելի են նաև «Հայկական կրթական միջավայր» պորտալի «Պաշարների շտեմարան» ենթակայքում (http://lib.armedu.am)»: Ասորերենի ուսուցման կազմակերպման համար ներգրավված են համայնքի ներկայացուցիչները, որոնք հանձն են առել իրենց լեզվով դասագրքերի մշակումը:

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» 2022 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-441-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, մինչև 2030 թվականը պետք է իրականացվի կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում, մասնավորապես՝ հայալեզու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագիր և էլեկտրոնային ուսումնական պաշարների հարստացում:

Նախադպրոցական ծառայություններ չունեցող համայնքներում, ներառյալ ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում, նախադպրոցական հաստատությունների, այդ թվում՝ այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում,

Հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում սովորողների այն խմբերի և դեպքերի համար, երբ առկա ուսուցումը հնարավոր չէ: Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում է Ազգային փոքրամասնությունների լեզուներով էլեկտրոնային բաց պաշարների ստեղծում (2024թ.- 3, 2026թ. – 9, 2030թ.- 21)

2023թ. մայիսի 11-ի թիվ 720-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2012թ. հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի)» կարգում, որը ՀՀ բուհերի առկա ուսուցման ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովին հնարավորություն է տալիս բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տվյալ ուստարվա համար հատկացված անվճար տեղերը բաշխել համապատասխան մասնագիտությունների վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքած և քննություններից առավել բարձր միավոր ունեցող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև:

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկով նախատեսվում է բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական

ծրագրերով) յուրաքանչյուր տարի մինչև 7 անվճար տեղերի հատկացում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների ընդունելության համար:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում մշտապես խթանվում է ազգային փոքրամասնությունների լեզվի զարգացումը, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը և ամրապնդումը: Համալսարանում գործող Հունարենի և հունական մշակույթի կենտրոնը, Ֆրանց Վերֆելի անվան եբրայագիտության կենտրոնը, Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը, ինչպես նաև վրացերենի կենտրոնը, որտեղ ԲՊՀ-ն ապահովում է տվյալ լեզվի ներկայացուցիչների և լեզվակիր դասախոսների ուղղակի մասնակցությունը մշակութային գործունեությանը՝ դրսևորելով կառուցողական մոտեցում տարածաշրջանային կամ ազգային փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն ապահովելու համար: Համալսարանը պարբերաբար կազմակերպում է նաև ազգային փոքրամասնությունների պատմությանը, գրականությանը, մշակույթին, ազգային տոներին և այլ նշանակալից իրադարձություններին նվիրված միջոցառումներ, դասախոսություններ և սեմինարներ:

Լեզվական քաղաքականության ընդլայնման նպատակով Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի օտար լեզուների և գրականության ամբիոնը նախատեսում է ստեղծել գիտարշավային խմբեր՝ ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո և Լերմոնտովո գյուղերում բնակվող ռուս-մոլոկանների ավանդական մշակույթի գոյության ուսումնասիրություն և հետազոտություն իրականացնելու նպատակով: Բանահյուսական, ազգագրական և բարբառագիտական գիտական արշավների հիմնական նպատակն է լինելու ավանդական ժողովրդական մշակույթի տեսակների և ձևերի, սովորույթների և ավանդույթների պահպանումը: Նախաձեռնությունը պետք է իրականացվի ավանդական մշակույթի հետազոտողների և գիտարշավային խմբերի անդամների կողմից:

ՀՀ կառավարության որոշմամբ համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում. ՀՀ Արագածոտնի մարզում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների /եզդիներ և քրդեր/ բնակավայրերով չորս համայնք, որից 3-ը՝ խոշորացված: Մարզում ազգային փոքրամասնությունների բնակավայրերում գործում է 18 դպրոց: Ալագյազի, Ճարճակիսի և Սիփանի միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է քրդերեն լեզու, իսկ եզդիերեն լեզուն ուսումնասիրվում է խմբակների դասաժամերին: Ավշենի, Ջամշլուի հիմնական դպրոցներում, դպրոցական բաղադրիչների հաշվին, միաժամանակ ուսումնասիրվում են եզդիերեն և քրդերեն լեզուները: Սադունցի, Կանիաշիրի, Միրաքի, Շենկանիի, Միջնատունի հիմնական և Ռյա-Թազայի միջնակարգ դպրոցներում դպրոցական բաղադրիչի դասաժամերը տրամադրվել են եզդիերեն

լեզվին: Արտենիի հիմնական դպրոցում մայրենի լեզուն ուսուցանվում է խմբակի դասաժամին:

Ազգային փոքրամասնությունների հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտները ակտիվորեն մասնակցում են դպրոցականների առարկայական օլիմպիադաներին, մարզային /«Ոսկե սերմեր» 4-րդ մրցանակաբաշխություն, «Մենք մեր տանն ենք» մշակութային միջոցառում/, հանրապետական միջոցառումներին, ազգային տոներին նվիրված մարզային /«Ալդա Թաուսի Մալաք», «Քյոսալ Գալդի», «Աիդա Եզդիդ»/, համայնքային և դպրոցական, ինչպես նաև մարզական միջոցառումներին: ՀՀ Արագածոտնի մարզում ստեղծված են բոլոր պայմանները ազգային փոքրամասնությունների մշակույթի ու ավանդույթների պահպանման համար: Դպրոցներում գործածության է դրված ՀՀ ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված և տպագրված ազգային լեզվով դասագրքերը և ապահովվում է համապատասխան լեզվի ուսուցումը, որը կատարվում է պետական միջոցների հաշվին՝ անկախ երեխաների թվից: Շամիրամի հիմնական դպրոցում բաժանորդագրվում են «Արեգ», «Շամս» մանկական ամսագրերը, համայնքներում՝ «Ռյա Թազա», «Զագրոս» թերթերը: Ակտիվ է համագործակցությունը ինչպես այլ մարզերի, այնպես էլ արտասահմանում բնակվող՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

ՀՀ Արմավիրի մարզի 111 հանրակրթական ուսումնական հաստատություններից 10-ում գործում է եզդիերենի, իսկ 1-ում՝ ասորերենի խմբակ:Համաձայն հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված տեղեկատվության՝ ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդման հետ կապված հիմնական խնդիրը համապատասխան որակավորմամբ մասնագետի բացակայությունն է: Այն ուսումնական հաստատություններում, որտեղ սովորում են եզդի երեխաներ իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված ազգային փոքրամասնությունների տոներին, ինչպես նաև կազմակերպվել է եզդի աշակերտների այցելություն Ակնալիճ բնակավայրում բացված «Լալիշ» սրբավայր:

ՀՀ Արարատի մարզի Արարատ, Արտաշատ, Մասիս համայնքներում սովորում են ազգային փոքրամասնություններ ներկայացնող աշախեկրտներ, մարզի Դիմիտրովի և Վերն Դվինի ասորական համայնքներում գործում են հանրակրթական միջնակարգ դպրոցներ: Ազգությամբ ասորի երեխաները իրենց կրթությունը ստանում են այդ դպրոցներում գործող ռուսերեն ուսուցման դասարաններում՝ ասորերենի պարտադիր ուսուցմամբ: Ազգությամբ եզդի երեխաները իրենց մայրենի լեզուն ուսումնասիրում են արտադասարանական խմբակներին հատկացված ժամերի ընթացքում: Դպրոցներն ապահովված են համապատասխան դասագրքերով և ուսումնաօժանդակ գրականությամբ:

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքում գործող «Աթուր» և «Գաբբարա» հասարակական կազմակերպությունները զբաղվում են ասորիների կրթական,

մշակութային, սոցիալական իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում են ազգային և կրոնական տոներին նվիրված տարաբնույթ ազգագրական միջոցառումներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունենում նաև մանկապարտեզի սաները:

Աբովյան քաղաքի Ն. Վանյանի անվան N 5, Հրազդանի Հ. Պարոնյանի անվան N 12 հիմնական և Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցներում գործում են ռուսերեն խորացված ուսուցման դասարաններ: Դպրոցներն ունեն հատուկ ծրագիր, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ: Ջրվեժի, Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան, Նոր Գեղիի N 1, Քանաքեռավանի միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն, իսկ Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում՝ ասորերեն խմբակի շրջանակներում: Աբովյանի Ն.Վանյանի անվան N 5 հիմնական դպրոցում օտարերկրյա քաղաքացիների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար առկա են ռուսերեն ուսուցմամբ դասարաններ, իսկ հայերեն ուսուցմամբ դասարաններում ռուսերենը դասավանդվում է խորացված ուսուցմամբ:

Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում առկա են ռուսերենով ուսուցմամբ, ասորերենի ուսումնասիրմամբ դասարաններ (1-ից 12-րդ դասարաններ), որտեղ կրթություն են ստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ՝ մասնավորապես ասորիներ:

Ասորերեն լեզու և գրականություն առարկան 2019-2020, 2020-2021, 2021-2022, 2022-2023 ուսումնական տարիներին ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված օրինակելի ուսպլանների համաձայն 1-12-րդ դասարաններում հատկացված է եղել շաբաթական 34 դասաժամ: Դասաժամերի բաշխումն ըստ դասարանների կատարվել է նրանց գործող ուսումնական ծրագրերին համապատասխան: Հրազդանի Հ.Պարոնյանի անվան N12 հիմնական դպրոցում օտարերկրյա քաղաքացիների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար առկա են ռուսերեն ուսուցմամբ դասարաններ, իսկ հայերեն ուսուցմամբ դասարաններում ռուսերենը դասավանդվում է որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս:

Ջրվեժի միջնակարգ դպրոցում եզդիերեն լեզուն ուսուցանվում է խմբակի տեսքով, քանի որ եզդի սովորողների թիվը այնքան էլ մեծ չէ: 1-12-րդ դասարաններում եզդիերեն լեզվի ընդհանուր շաբաթական ժամաքանակը չի գերազանում 11ժամը: Ջրվեժի միջնակարգ դպրոցում կարևորվել է ազգությամբ եզդի սովորողների համար ուսումնական բազայի բարելավման գործընթացը, մասնավորապես, յուրաքանչյուր ուսումնական տարի ուստարվա համար պատվիրվել են եզդիերեն դասագրքեր՝ «Այբենարան», «Եզդիերեն լեզու»:

Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում 2019-2024թթ. ընթացքում յուրաքանչյուր ուսումնական տարի սովորել են շուրջ 50 եզդի սովորողներ:

Նրանց ուսումնառությունն իրականացվել է իրենց մայրենի լեզվի՝ եզդիերեն խմբակի ծրագրի շրջանակներում: Խմբակի պարապմունքներն իրականացվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված ծրագրով: Դպրոցն ապահովված է եզդիերենի դասագրքերով: Խմբակի պարապմունքները կատարվում են հետևյալ ժամաբաշխմամբ. Տարրական դպրոց՝ շաբաթական 2 ժամ, միջին դպրոց՝ շաբաթական 2 ժամ: Նոր Գեղիի N1 միջնակարգ դպրոցում եզդիերեն լեզուն դասավանդվում է խմբակի միջոցով դեռևս 1995 թվականից մինչև օրս:

Երևանի քաղաքապետարանի Ա. Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոցում 1998 թվականից դպրոցի ռուսերենով ուսուցմամբ դասարաններում և Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցում ուսումնական պլանով նախատեսված որպես հիմնական առարկա դասավանդվում են «ասորերեն» և «ասորական գրականություն» առարկաները: Ասորական համայնքի ջանքերով մշակվել և տպագրվել են դասագրքեր, որոնցով իրականացվում է ուսուցումը: Ուսուցիչներն ազգությամբ ասորի են, ինչը ևս նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտներին ասորական մշակույթին, ավանդույթներին և ազգային այլ առանձնահատկություններին հաղորդակից դարձնելու գործում: Դասերի ընթացքում ուսուցիչներն այլընտրանքային կարգով կիրառում են նաև ասորական պատմության դասագրքեր, ասորի հեղինակների կողմից ստեղծված գեղարվեստական գրականություն:

Առարկաների դասավանդումը հնարավորինս զուգորդվում է ասորական պոեզիայի և երգերի ուսուցանմամբ, ինչն առավել հետաքրքիր և բովանդակային է դարձնում դասաժամերը: Կազմակերպվում են նաև բաց դասեր, բեմականացված ներկայացումներ, ցուցահանդեսներ և արտադասարանական այլ միջոցառումներ: Յուրաքանչյուր տարի 7-րդ դասարանի աշակերտները կազմակերպում են դաս-զեկույց ասորի ազգության պատմության մասին, իսկ 8-րդ դասարանցիները՝ ասորական մշակույթի, հագուստի, կենցաղի և այլ ավանդույթների մասին:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական դպրոցների ուսումնական պլանով 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկան ընդգրկված է պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում: Ուսուցումն իրականացվում է Հայաստանում հրատարակված դասագրքերով, որտեղ հաշվի են առնվել ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հանրապետության մի շարք դպրոցներում բացվել են ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարաններ: Երևանում գործում է քաղաքապետարանի ենթակայության ռուսերենով խորացված 30 դպրոց: Այդ դպրոցներին տրամադրվել են հատուկ ծրագիր, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ: 2020 թվականի դրությամբ Երևանի քաղաքապետարանի թվով 13 դպրոցում առկա են ռուսերենով ուսուցմամբ դասարաններ: Այդ դպրոցներին տրամադրվել են համապատասխան դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ: ՀՀ-ում հաստատված է ռուսերեն լեզվով

խորացված ուսուցմամբ հիմնական և միջնակարգ 60 և ռուսերեն լեզվով ուսուցմամբ 50 դպրոցներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ իրականացվում է ազգային փոքրամասնությունների տարրական, միջին և ավագ դպրոցների դասարանների համար նախատեսված դասագրքերի հրատարակումը.

2020 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք են բերվել և բաշխվել են հետևյալ դասագրքերը՝ «Եզդիերեն այբբենարան»՝ 720, «Եզդի գրականություն» /5-րդ դասարան՝ 644, «Եզդի գրականություն» /8-րդ դասարան՝ 635, «Եզդի գրականություն» /9-րդ դասարան/՝ 638, «Եզդիերեն» /3-5-րդ դասարան/՝ 1614, «Եզդիերեն» /6-8-րդ դասարան/՝ 1625:

2021 թվականին ձեռք են բերվել հետևյալ դասագրքերը՝ «Եզդիերեն այբբենարան»՝ 257, «Եզդի գրականություն» /6-րդ դասարան/՝ 248, «Եզդի գրականություն» /7-րդ դասարան/՝240, «Եզդի գրականություն» /10-րդ դասարան/՝ 138, «Եզդի գրականություն» /11-րդ դասարան/՝ 128, «Եզդիերեն» /9-10-րդ դասարան/՝ 169:

2022 թվականին ձեռք են բերվել հետևյալ դասագրքերը՝ «Եզդիերեն այբբենարան»՝ 400, «Եզդիերեն» /2-րդ դասարան/՝ 400, «Եզդիերեն» /3-րդ դասարան/՝ 400, «Եզդիերեն» /4-րդ դասարան՝ 400, «Եզդի գրականություն» /12-րդ դասարան/՝400, «Եզդիերեն» /11-12-րդ դասարան/՝ 400, «Քրդերեն այբբենարան»՝ 50, «Քրդերեն» /4-րդ դասարան/՝ 50, «Քրդերեն» /5-րդ դասարան/՝ 50, «Քրդերեն» /6-րդ դասարան/՝ 50, «Խոսիր ասորերեն» / 1-ին դասարան/՝ 60, «Գրիր և խոսիր ասորերեն» / 1-ին դասարան/՝ 60, Գրիր և խոսիր ասորերեն» /2-րդ դասարան/՝ 60, «Ալլափ-բիթ» /1-րդ դասարան/՝ 60

2023թ ազգային փոքրամասնությունների աշակերտների համար տպագրվել է ընդհանուր 941 դասագիրք, որից՝ 1-ին դասարանի համար 2 տարբեր հեղինակների «Եզդիերեն այբուբեն»՝ 198 և «Քրդերեն այբուբեն» 26 հատ, 2-րդ դասարանի համար՝ «Քրդերեն» 25 հատ, 3-րդ դասարանի համար՝ «Քրդերենի» 30 և «Եզդիերենի» 315 դասագիրք՝ նախատեսված 3-5–րդ դասարանի աշակերտների համար, 5-րդ դասարանի համար «Եզդի գրականություն»՝ 84, «Եզդիերեն» 6-8–րդ դասարանների համար՝ 132, 7-րդ և 8-րդ դասարանների համար «Քրդերեն»՝ համապատասխանաբար՝ 22 և 17 դասագիրք, «Եզդի գրականություն» 8-րդ և 9-րդ դասարանների համար՝ 37–ական և «Քրդերեն» 9-րդ դասարանի համար՝ 18 դասագիրք:

ՀՀ բոլոր դպրոցները (այդ թվում նաև ազգային փոքրամասնություններ ներկայացնող դպրոցները) ընդգրկված են Հայաստանի կրթական ցանցում (ՀԿՑ) և ապահովված են շուրջօրյա անխափան ինտերնետային կապով:

Ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդումը և ուսուցումը ապահովելու համար Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է շարունակական ծրագրեր, որոնք նպաստում են ազգային փոքրամասնությունների կրթության արդյունավետ կազմակերպմանը: Սակայն ձեռնարկվող քայլերը արդյունավետ կլինեն միայն այն դեպքում, եթե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ցանկություն հայտնեն օգտվել ստեղծվող հնարավորություններից:

2020-2023 թթ. նախադպրոցական կրթության նախակրթարաններ են ստեղծվել ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական շուրջ 70 համայնքներում:

ՀՀ կառավարության որոշմամբ Ալագյազ համայնքի Ալագյազ բնակավայրում կառուցվում է մսուր մանկապարտեզ՝ նախատեսված 144 սանի համար, ուր հաճախելու հնարավորություն կունենան համայնքի 11 բնակավայրերի նախադպրոցական տարիքի երեխաները: Մանկապարտեզը շահագործման կհանձնվի 2024 թվականին:

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում ստեղծվել է և 2022 թվականի սեպտեմբերից գործում է դպրոցահեն նախակրթարան:

Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության 23-րդ կետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի «Ալյոնուշկա մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում գործում է ռուսերեն լեզվով ուսուցմամբ տարատարիք խումբ, որտեղ կրթություն են ստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ՝ ասորիներ: Ուսուցումը իրականացվում է ռուսերեն լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Մանկապարտեզում ամեն տարի ասորերենով անկացվել են տարբեր միջոցառումներ, բաց դասեր, ազգությամբ ասորի դաստիարակի մասնակցությամբ: Ասորական Նոր տարվան (Հաբ Նիսան, որը 2008 թվականի ապրիլի մեկից հաստատվել է ՀՀ կառավարության կողմից) նվիրված միջոցառման անցկացումը դարձել է ավանդույթ, որին մասնակցում են նաև ծնողները՝ նպատակ ունենալով պահպանելու ազգային մշակույթն ու ավանդույթները:շ

ՀՀ Լոռու մարզում նախադպրոցական կրթություն ռուսերեն լեզվով իրականացվում է Լերմոնտովո համայնքում՝ «Սկազկա» նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

✓ ***Հոդված 15***

-Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում ապահովելու համար:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Ընտրական ցուցակի երկրորդ մասում ընդգրկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածուն կարող է ընդգրկվել նաև ընտրական ցուցակի առաջին մասում:

Օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով պատգամավորների 4 մանդատ բաշխվում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչների միջև՝ ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրին՝ մեկ մանդատ սկզբունքով:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ հասարակական և քաղաքական կյանքին մասնակցությունը խթանելու նպատակով կարգավորումներ են նախատեսվել նաև «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով, որի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կուսակցություններին տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորում կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:

Հայաստանում մշակութային բազմազանություն ապահովող ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ ապահովելու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային կյանքին, ինչպես նաև երիտասարդ սերնդին երիտասարդական ոլորտի ծրագրերում ներգրավվելու համար:

ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին մշակույթի տարբեր ոլորտներում ընդգրկելու և նրանց մասնակցությունը ապահովելու նպատակով կազմակերպվել են նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոններ՝

Արվեստի ոլորտում.

2021 թվականի մայիսի 20-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը «Արվեստ» հասարակական կազմակերպության հետ (Էրվին Ամիրյանը՝ եզդի) իրականացվել է «Դասական վոկալ երաժշտության համերգ» խորագրով ծրագիր: Համերգին ելույթ են ունեցել ազգությամբ եզդի մեներգչուհի՝ սոպրանո Դիանա Ամիրյանը (Գերմանիա) և ազգությամբ քուրդ մեներգչուհի՝ սոպրանո Յուլիա Կարատաշը (Գերմանիա): Նախագծին ներկա են եղել շուրջ 100 հանդիսատես:

2022-2023 թթ. դեկտեմբերին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կայացել է ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ համատեղ համերգ, որը կրել է «Տանիքը՝ Հայաստան» խորագիրը: Համերգին ելույթ են ունեցել ՀՀ տարածքում գտնվող բոլոր 11 փոքրամասնությունների երաժշտախմբերն ու պարախմբերը Երևանից և ՀՀ մարզերից: Համերգասրահի ճեմասրահում տեղադրվել են տաղավարներ, որտեղ յուրաքանչյուր համայնք ներկայացրել է ձեռագործ աշխատանքներ, թերթեր, գրքեր և այլն: Ազգային փոքրամասնությունների հետ տեղի է ունեցել՝ հանդիպում-քննարկում, համերգ, ցուցահանդես: Ծրագրին հատկացվել է 8 մլն դրամ:

2023 թ. ապրիլի 1-ից հունիսի 1-ը՝ կարևորելով ազգային փոքրամասնությունների ընդգրկվածությունն ու մասնակցությունը կրթամշակութային և հասարակական կյանքին՝ 60 եզդի երեխաների համար՝ ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքում, կազմակերպվել են ուսուցողական ծրագրեր գեղանկարչության ուղղվածությամբ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ոլորտում.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի շրջանակում «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպությունը ֆինանսական աջակցություն է ստացել եզդիների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և տարածման նպատակով մշակութային ծրագրեր իրականացնելու համար:

2019թ. ապրիլից օգոստոս ամիսներին «Եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպման» ծրագրով եզդիական համայնքի մասնակցությամբ Զովունիում և Եղվարդում իրականացվել են եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումներ, որոնք մեկնարկել են ապրիլին՝ Զովունիում, երբ եզդիական համայնքը նշում է «Մալակե թաուսի» տոնը («Զարշամա սարե սալե»), որը եզդիների Նոր տարին է և եզրափակվել են օգոստոսին՝

Եղվարդում տեղի ունեցած եզդիական ավանդական «Չլե հավինե» տոնի իրականացմամբ.

2020-2021թթ. ՀՀ Արագածոտնի մարզում իրականացվել է «Հանդիպում սարվորների հետ» ծրագիրը, որի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ ՀՀ Արագածոտնի մարզի սարվորների հետ, որոնց ընթացքում կազմակերպվեցին տոնակատարարություններ, ազգային երաժշտության, երգ ու պարի կատարումներ, գրքերի, թերթերի նվիրաբերություններ: Համանման միջոցառումներին ամեն տարի մասնակցել են 60-70 տարբեր տարիքի և սեռի անձինք, որոնց նպատակը եզդիների ավանդական տոների կենսունակության և շարունակականության ապահովումն է, ազգային սովորույթների, բարքերի, երգ ու պարի, ուտեստի ավանդույթի պահպանումը, սերնդեսերունդ դրանց փոխանցման արժևորումը, նոր սերնդի ինքնագիտակցության մեջ նախնիներից ժառանգված ազգային սովորույթների նկատմամբ հարգանքի և գնահատանքի ամրապնդումն ու կարևորությունը:

2020թ. Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից պատրաստվել է «Հայաստանի Հանրապետության ամենամեծ ազգային փոքրամասնության՝ եզդիական համայնքի իրավունքները» հետազոտության զեկույցը, որին խորհրդատվական աջակցություն է տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

2021թ. «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպությունը և ՀՀ-ում բնակվող ասորիների համայնքը մասնակցել են Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացին, որի շրջանակում ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 599-Ն որոշմամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը համալրվել է «Եզդիների հարսանեկան ծեսը» և «Ասորիների Նոր տարվա տոնակատարությունը» տարրերով: Գործընթացը շարունակական է:

2021թ. «Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացին, որի արդյունքում 2021 թ. նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1825-Ն որոշմամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող արժեքների ցանկը համալրվել է «Հայաստանի հույն ազգաբնակչության պոնտիերեն բարբառ» տարրով:

2022թ. ԱՊՀ համագործակցության երկրների կողմից հայտարարված ժողովրդական ստեղծագործության և մշակութային ժառանգության տարվա

շրջանակում Գյումրիում տեղի ունեցավ «Գյումրի. վարպետաց քաղաք» փառատոնը (բյուջե՝ 6.273.600), որի նպատակն էր մշակութային մեկ հարթակում միավորել արդի շրջանի ժողովրդական արհեստները, բարձրացնել դրանց ճանաչելիությունը և նպաստել այդ ժառանգությունը կրող ու փոխանցող անհատների ստեղծագործական առաջխաղացմանը: Փառատոնին մասնակցեցին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների ստեղծագործական խմբերը՝ այդ թվում ներկայացվեցին ռուսական և բելառուսական համայնքների գեղարվեստական աշխատանքները, երգն ու պարը:

2023թ. նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 2097-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում գրանցվեց եզդիների համայնքի «Բուկա բարանե» անձրևաբեր ծես» արժեքը:

2020-2021թթ. COVID-19 համավարակով և Ադրբեջանի կողմից սանձազեռծված 44-օրյա պատերազմով պայմանավորված նախատեսված շատ մշակութային միջոցառումներ չեղարկվել են կամ սակավ են իրականացվել:

✓ ***Հոդված 16***

- Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով, և նպատակ ունեն սահմանափակելու սույն Շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

Հայաստանի Հանրապետության 2016թ. մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում նախաձեռնված համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է թվով 64 համայնք: Միավորման գործընթացում չընդգրկված համայնքների թիվն է 7՝ Երևանը, Գյումրին, և ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված 5 համայնքներ: Համայնքների ընդհանուր թիվն է 71 (գործընթացի մեկնարկին՝ 915): Համայնքների միավորման գործընթացն իրականացնելիս ՀՀ կառավարությունը մշտապես ձեռնպահ է մնացել համայնքների այնպիսի միավորումների ձևավորումից, ինչի արդյունքում կփոփոխվեր բնակչության կառուցվածքային կազմն այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով:

Ազգային փոքրամասնություններ ընդգրկող բնակավայրերի մի մասն ընդգրկված է «500 մանկապարտեզ և 300 դպրոց» ծրագրում, որի հետ կապված իրականացվում է գույքագրում և աուդիտ:

Ներկայումս գործող «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորումների համաձայն 2024թ. համահարթեցման դոտացիայի հաշվարկները պետք է իրականացվեն ոչ միայն ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի («բ» մաս), այլ նաև ըստ համայնքների բնակչության թվաքանակի («ա» մաս): Ընդ որում, «ա» մասով հատկացվող համահարթեցման դոտացիաները նախատեսվում են մինչև 3500 բնակիչ ունեցող համայնքներին: Դրանք հիմնականում ազգային փոքրամասնությունների էթնիկ համայնքներն են (թվով՝ 8 համայնք՝ Արևուտ, Մեծաձոր, Շամիրամ, Վերին Դվին, Ֆերիկ, Լերմոնտովո, Ֆիոլետովո և Արզնի), որոնցից յուրաքանչյուրին նախատեսվում է 50 մլն դրամ (Տե՛ս նաև Զեկույցի՝ CM/ResCMN(2023)6 բանաձևի կատարման ընթացքն ամփոփող հատվածի Կետ 14):

- ✓ ***Հոդվածներ 17.1, 17.2, 18.1 և 18.2***

-Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես, նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:

-Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը ազգային և միջազգային մակարդակներով մասնակցելու իրավունքը:

-Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

-Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն անդրսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

Հայաստանը գիտակցում է անդրսահմանային փոխգործակցության կենսական դերը միջմշակութային երկխոսության, պատմական, քաղաքակրտթական և մշակութային ժառանգության պահպանման և տարածաշրջանում կայունության, խաղաղության և տնտեսական կայուն զարգացման առումով:

Հայաստանը ակտիվ ջանքեր է ձեռնարկում անդրսահմանային փոխանակումները խթանելու ուղղությամբ՝ էական կարևորություն տալով այն միջոցառումներին, որոնք միտված են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու մշակութային և պատմական կապերի պահպանմանը՝ այդ թվում միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ:

Միջսահմանային փոխգործակցությունը խթանելու նպատակով է, որ 2024թ. Հայաստանը նախաձեռնել է տարածաշրջանում տրանսպորտային և տնտեսական հաղորդակցությունների ապաշրջափակմանն ուղղված՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը[3], որը տարածաշրջանում խաղաղության ու կայունության խթանմանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերի առանցքային մասն է:

[3] https://www.gov.am/am/thecrossroadsofpeace